# ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ — № 11 — 6 ՄԱՅԻՍԻ 1890

Բաժանորդագինն է տարեկան ՏԱՍՆ րուբլի, կէս տարուանը ՎԵՑ րուբլի։ Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը (Վելիամինօվսկայա փողոց, քաղաքային վարչութեան տան հանդէպ)։ Նամակագրութիւնը պիտի լինի՝ Тифлисъ, Редакція иллюстрированной газеты „Ардзаганкъ“.

Ըրատասհմանից՝ Rédaction du journal illustré „Ardzagang“.

Առանձին համարների գինը 30 կ.

Յայտարարութիւնների բաւին 4 կ.


## Ի՞ՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԾԱՌԱՅԵԼ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԽՕՍՔԻՆ

—

*Եթէ ամեն մի քիչ շատ կրթուած հասարակութեան մէջ աղնուութիւնը և ճշմարտասիրութիւնը անհրաժեշտ են համարվում կեանքի որ և է ասպարիզում գործողի համար, այդ յատկութիւններն անհամեմատ աւելի կարևոր են այն մարդկանց համար, որոնք կոչուած են տպագրական խօսքի ասպարիզում գործելու, դորա միջոցով դաստիարակելու հասարակական միտքը։*

*Տպագրական խօսքի միակ պաշտօնն է ճշմարտութիւն և ազնիւ գաղափարներ արծարծել հասարակութեան մէջ, լուսաւորել ժողովրդի միտքը ճշմարտութեան լուսով, և այսպիսով օգնել նորան իւրացնելու գիտութեան և կեանքի մշակած ճշմարտութիւնները և աւելացնելու իւր երջանկութիւնը։ Այդ է տպագրական խօսքին ծառայողի առաջին և վերջին ձգտումը. դորանում նա պիտի որոնէ իւր ներկան և ապագան, իւր աջողութիւնը կամ ձախորդութիւնը, իւր ուրախութիւնը կամ տխրութիւնը. դորանից դուրս ոչ մի հաշիւ, ոչ մի ձգտում նա չը պիտի ունենայ։*

*Սակայն տեսական այդ պարզ ճշմարտութիւնը յաճախ կեանքի մէջ նոյնքան պարզ չէ երևում։ Գրականութեան մէջ, ինչպէս հասարակական կեանքի այլ և այլ ասպարէզներում, պատահում են դէպքեր, երևոյթների այնպիսի համադասութիւն, որ կարծես թէ ճշմարտութիւնը և ազնուութիւնը յաղթուած են թւում, իսկ կեղծը, ծուռը յաղթանակ են տանում։*

ՄԶԵՑԻ ՀՈՅԵՐ։

*Մարդիկ, որ կոչուած են տպագրական խօսքին ծառայելու, նիւթական ապահովութիւն, պիրք, ազդեցութիւն և գրականական անուն վաստակելը որոնում են կողմնակի, ճշմարտութիւնից և ազնուութիւնից դուրս հաշիւներում, կամ օգուտ են քաղում ժամանակի պղտորութիւնից, ժողովրդի վատ ընազդումները շոյելուց և նորա կրքերը լալելուց։ Կամ յաճախ նոքա այդ ամենը ձգտում են ձեռք բերել գրականական քաջութիւններով, շողոքորթութիւններով մէկին կամ միւսին հաճոյանալով, կամ բանսարկելով։*

*Շատ անգամ այդպիսիներին յաջողվում է այդ միջոցներով մի որոշ աստիճանի հասնել իրանց նպատակին։*

*Սակայն պեռ չէ պատահել, և հազիւ թէ երբևէ է պատահի, մի դէպք համաշխարհային գրականութեան մէջ, որ ճշմարտութեան դաւաճանող, ուստի և կեղծութեան միջոցով գործող, որ և է հեղինակի նակին յաջողուի խաբել յարատև կերպիւ բոլոր սերունդներին և այդպէս գրականական անուն ու պատիւ վաստակել։ Մասնաւոր կեանքում, կամ ուրիշ ասպարէզներում արած մարդկանց չարագործութիւնները, կեղծ ու խարդախ գործերը շատ անգամ մոռացութեան են տրվում, երբեմն էլ նոյն իսկ հետևեալ սերունդի ժամանակ։ Մինչդեռ գրականական անաղնուութիւնը, կեղծը և խարդախութիւնը յաջորդաբար անցնում են սերնդէ սերունդ և աւելի դժուար են մոռացվում։ Եթէ ժամանակակից սերնդի կարճատեսութիւնը չէ թոյլ տալիս այդ կեղծը և անաղնիւը տեսնելու կամ նա կրքից կուրացած կորցնում է իւր առողջ դատողութիւնը, հետեւեալ սերունդները բաց են անում ժողովրդի աչքերը և այն ժամանակ կեղծին, ստին, խարդախութեանը տալիս են պատշաճաւոր անուններ։ Յաճախ պատահում է, որ նոյն իսկ սերունդը մի ամենապարզ միջոցով քանդում է ճշմարտութեան դաւաճան հեղինակի երկար ժամանակ և մեծ ճարպիկութեամբ հիւսած գրականական կնճիռը։ Այդպէս է ամեն մի կեղծ գործի ճակատագիրը։*

*Երբ մի գրականական գործիչ դէթ մի րոպէ ընդունակ է լինում դաւաճանել ճշմարտութեանը, իւր խղճի դէմ մի քայլ անել, այդ առաջին քայլը ծնեցնում է նոր և նոր քայլեր. նա իւր ձեռքով պատրաստում է իւր անկումը։ Այդ կանոնը ամենից լաւ պէտք է գիտենան տպագրական խօսքի բոլոր պաշտօնեաները։*

*Չանճար, տաղանդ, ձիրք կամ ընդունակութիւն—դրքա բնութեան պարգևներ են, որ մէկին տրուած է լինում աւելի,*

մլուսին պակաս: Սակայն ազնուլթեամբ և ճշմարտուլթեամբ տպագրական խօսքին ծառայելը ամենաանհրաժեշտ պայման է ամեն մի գրողի համար. նորան կը ներեն նորա անտաղանդուլթիւնը, անընդունակուլթիւնը, անգամ ագիտուլթիւնը, բայց երբէք չեն ներիլ նորա ստորուլթիւնը, գրականական խարդախուլթիւնը և ճշմարտուլթեան և ազնուլթեան դաւաճանելը:

Ինչ սարսափելի բան է, երբ որ և է գրականական գործիչի մասին սերունդէ սերունդ աւանդւում է, թէ «այսինչ գործիչը տաղանդաւոր էր, բայց ստոր և անազնիւ էր և նա իւր տաղանդը ծառայեցնում էր ճշմարտուլթեան դէմ մաքառելուն»: Էլ չենք ասում, որ այդ դէպքում տաղանդը կորցնում է իւր զարգացման բնական ճանապարհը և իւր գործունէուլթեան ամենամտերիմ և անշահասէր ղինակիցը: Գրականական գործիչը իւր ամեն մի քայլում, իւր կեանքի ամեն մի շրջանում համարձակ սլիտի կարողանայ արտասանել բանաստեղծի խօսքը թէ՝

Բայց հանգիստ եմ ես հոգով,
Որովհետև խիղճս արդար է
Ճշմարտուլթեան ջատագով:

Սակայն ճշմարտուլթեան ծառայել չէ նշանակում, երբ մարդիկ տպագրական խօսքը ծառայեցնում են իրանց կրքին, եսին, ինքնագովուլթեան և ինքնափառաբանուլթեան: Մի գրականական գործիչի բորբոքուած կիրքը, երբ այդ կրքի շարժառիթը լինում է եսամոլուլթիւնը, ոչ միայն արդարուլթեան և ճշմարտուլթեան բողոք չէ, ինչպէս ոմանք կարծում են, այլ ճշմարտուլթեան դէմ՝ ամենամեծ դաւաճանուլթիւն է: Այդ դէպքում նա կորցնում է առողջ դատողուլթիւնը, խլացնում է իւր խղճի ձայնը և անընդունակ է լինում տեսնելու իրերը իրանց իսկական գոյներով: Դա մի տեսակ դատօնական հիւանդուլթիւն է տպագրական խօսքի: Նորա ներկայացուցիչը բոլորովին այլ գոյներ, այլ ձևեր և կերպարանքներ է տալիս իւր երևակայուլթեան մէջ իրերին և անձերին, քան նոքա ունեն իրական աշխարհում: Նա կորցնում է անաչառուլթեան և բարեխղճուլթեան վերջին նշոյլները և այդպիսով ճշմարտուլթիւնը ընդ միշտ հեռանում է նորանից: Խաւարը նորան թւում է լոյս, լոյսը—խաւար: Երեկուայ ասածը այսօր նա ուրանում է. երեկուայ պահպանածը այսօր հերքում, երեկուայ պաշտածը այսօր ոտնահարէ անում, երեկուայ մեծարածը այսօր ցեխոտում է: Այդ էլ բաւական չէ. ամեն մի քայլափոխում նա սկսում է որոնել չարամտուլթիւն, դարանները, թշնամանք իւր դէմ և սկսում է մարտնչել չեղած երեւոյթների դէմ:

Պոքա չեն, յայտնի բան է, տպագրական խօսքի նպատակները: Հասարակուլթեան մտաւոր և բարոյական վերածնուլթեան ամենանշանաւոր գործոններից մէկն է տպագրական խօսքը: Այդպիսի ձգտումները ծառայեցնել նորան, ասել է կրկնակի մեղանչել հասարակուլթեան շահերի դէմ:

Սիրի բոլոր ասած այդ՝ թէև տարրական, բայց ամենաանհրաժեշտ պայմանները շատ անգամ պժբաղդաբար մոռացուլթեան են տրւում մեզանում:

Ֆան-ֆակ-Բուսսօն, աշխարհիս երեսին ամենաազնիւ և ճշմարտասէր գրողներից մէկը, որ ամենից շատ պախարակում էր կեղծը, սուտը, խարդախը կեանքի ամեն մի ասպարիզում, մանաւանդ հալածում էր տպագրական խօսքի՝ ճշմարտուլթեան դէմ մեղանչելը: Եւ ահա՝ այդ մեծ հանճարը, տեսնելով գրականական այդ տգեղ երեւոյթները, ինչ միջոց էր առաջարկում: Նա իւր հզօր խօսքով անընդհատ քարոզում էր հասարակուլթեանը ազնուլթեան և ճշմարտուլթեան շաւղով գաստիարակել մատաղսերունդը: Երևի նա համոզուած էր, որ հինը անուղղելի է: Այդ է պատճառը, որ այդ հռչակաւոր հրապարակախօսը ամենից շատ դրել է հասարակական դաստիարակուլթեան մասին:

Ժամանակ է, որ մեր գրականուլթիւնն էս հետևի այդ զգուշաւորին, օգուտ քաղէ այդ մեծ մարդու վարպետուլթիւնից և մեր գրականական կեանքում էս գործադրէ նորա տուած խորհուրդը: Նոքա, որոնց վիճակուած է այդ ասպարիզում գաստիարակիչ լինել, չը պէտք մոռանան իրանց այդ ծանր պարտաւորուլթիւնը, որպէս զի մեր գրականուլթեան մէջ էլ մի օր բարձրանայ ճշմարտուլթեան և ազնուլթեան արժէքը:

N. N.

---

## ՀԱՄԱՌՕՏ ՀԱՅԵՑԱԳՔ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒՐՈՊԱՑՈՒԻ

(Շարունակուլթիւն և վերջ).

Սղէքսանդր VII-րդ պապի քահանայապետուլթեան ժամանակ մինչև անգամ հարց ծագեցաւ մի գիմնազիոն հիմնելու Հռոմի մէջ հայ երիտասարդուլթեան համար՝ «ubi pie suo instituta ritu, studiis litterarum vacaret» այսինքն թէ «Այնտեղ, ուր հաստատուած են բարեպաշտական ծէսերը, դրական ուսմունքները բացակայ են լինում»:

Կաթոլիկ եկեղեցու անդրանիկ զաւակ Ֆրանսիան, որ խաչակիր պատերազմներից սկսած պահպանել էր դէպի արևելք արշաւելու աւանդուլթիւնը, գործնականապէս նպաստում էր Հռոմի նպատակների իրագործելուն: Կարդինալ Ռիշելիէօի ժամանակ մանաւանդ մի առանձին եռանդ ցոյց տուեց նա հայոց լեզուի ուսումնասիրուլթիւնը տարածելու մէջ: Այս նպատակով էր, որ Ռիշելիէօն առաջարկեց իւր թագաւորին յօրինել և տպագրել տալ արքայական տպարանում հայերէն դրքեր:

1633-ին Փարիզում տպագրուած Հայ—Լատին բառարանի յառաջաբանի մէջ յօրինիչը բացատրում է, թէ Ռիշելիէօն՝ յանկուլթիւն զգալով քրիստոնէական հաւատը տարածելու երկրագնդիս բոլոր աշխարհներում, դարձրել էր նոյնպէս իւր ուշադրուլթիւնը դէպի արևելք: - Այստեղ պէտք էր մի կողմից հարուածել քրիստոնէուլթեան թշնամիներին, իսկ միւս կողմից դէպի իսկական հաւատը դարձնել հերձուածներին: Բառարանի յօրինիչը՝ Կարդինալի ձեռնարկած այս արշաւանքը Տիգրիս ու Եփրատ գետերների վրայ՝ համեմատելով պատերազմական ձեռնարկումներին, շարունակում է այսպէս.

«Magni duces belliolim Asiam aliasque orbis terrarum partes ingressi sunt, non ut eas servarent, sed perderent. Dux noster. Cardinalis alia mente eo venturus est: ut nempe totam illam Orientis plagam luce fidei illustret. ut errorum fibras omneis elidat. oves dispersas congreget. Jesu Christi Regnum ibi rursus restituat, stabiliatque *)»:

Այսպէս ահա XVI-րդ դարուց սկսուեցաւ Հռոմում և Փարիզի մէջ հայոց լեզուի ուսումը՝ բացառապէս կրօնական տարածումի (պրօպագանդի) նպատակով: Հա-

---

Ընդեալ 10-րդ համարի՝ երկրորդ երեսի, երկրորդ էջում congregatione տպագրական սրխալը պէտք է կարդալ congregatia:

*) Մեծ գօրավարները ոչ թէ տիրելու, այլ ասես կորցնելու համար են արշաւել երբեմն Ասիա և երբեմն երկագնդիս միւս մասերը: Մեր գօրավարն էլ՝ Կարդինալի մի այլ մտադրուլթեան համեմատ, գնաց արևելք, որպէս զի՝ փարատելով այնտեղի ժողովրդի բոլոր սրխալները և հաւատի լուսով լուսաւորելով այդ ամբողջ երկիրը՝ թէ ժողովէ ցրուած ոչխարները և թէ այնտեղ հաստատապէս հիմնէ վերստին Յիսուս Քրիստոսի թագաւորուլթիւնը:

յագիտութեանը յատկացրած այսպիսի ուղղութիւնը շարունակուեց Ֆրանսիայում մինչև հին կարգերի անկումը:

Յեղափոխութեան միջոցին Լանգլէն, որ իւր ժամանակի նշանաւոր արևելագէտներից մէկն էր, 1790 թուականին Ֆրանսիայի ազգային ժողովին ներկայացրեց մի նախագիծ, որով առաջարկում էր նա «հիմնել մի պետրոց մասնաւորապէս արևելեան կենդանի լեզուների ուսումնասիրութեան յատկացրած»: Այս նոր հիմնուելիք դպրոցի նպատակը պիտի լինէր «վաճառականութիւն, քաղաքականութիւն և գիտութիւն»: Համաձայն ազգային ժողովի 1795 թուի, մարտ ամսի 30-ի՝ որոշման իրականութիւն գտաւ այս նախագիծը որով և արաբական, պարսկական ու թիւրքաց լեզուների երեք ամբիոնին 1798-ին աւելացաւ հայոց լեզուի ամբիոնն էլ, որի դասախօս կարգուեցաւ Ջրպետ անունով հայազգի պարոնը: Դասախօս Ջրպետը՝ մի առ ժամանակ դադարեցնելով իւր դասերը, 1812 թուի փետրվարի 27-ից, կայսերական հրամանով, տիտղոսաւոր պրօֆէսօր անուանուեցաւ նոյն հայոց լեզուի ամբիոնի: Նա շարունակեց իւր պաշտօնը մինչև 1826 թուականը՝ երբ արդէն ճանապարհ ընկաւ դէպի Թիֆլիս: Նորան յաջորդեց Լրվայեան Դը Ֆլօռիվալ Մովսէս Խորենացու պատմութեան հմուտ թարգմանիչը՝ շարունակելով իւր ուսուցչական պաշտօնը մինչև 1862 թիւը՝ այսինքն մինչև իւր մահուան օրը: Այնուհետև հանդուցեալ Եդուարդ Պիւլօրիէն շարունակեց դասախօսել մինչև 1881-ը:

Ներկայումս հայոց լեզուի ամբիոնը Փարիզի արևելեան լեզուների դպրոցում յանձնուած է պ. Ա. Կառիէռ՝ տաղանդաւոր պրօֆէսօրին, որի հմտութիւնը արժանապէս գնահատած է գիտնական աշխարհը: Ինչպէս հայագիտութեան այս մեր չիշած բոլոր պաշտօնական ներկայացուցիչները Ֆրանսիայում, նոյնպէս և Ակն-Մառտէն, Լանգլուայ, Լընօռման, Պրիւդօմ և այլն՝ մասնաւոր կերպով զբաղուող գիտնականները, իրանց աշխատութիւններով հայոց լեզուի, գրականութեան և պատմութեան վերաբերեալ՝ մեծ ծառայութիւն մատուցին գիտութեանը: Միւս կողմից հայ պատմիչների երկերը՝ թարգմանուելով ֆրանսերէն և տպագրուելով Եկիպտոսի նախարար (մինիստր) հայազգի նշանաւոր Նուբար-Փաշայի լուսամիտ նախաձեռնութեամբ ու դրամական օժանդակութեամբ, մի նոր զարկ տուին թէ արևելքի պատմութեան ուսումնասիրութեանն առհասարակ և թէ Բիւզանդիայի ու խաչակրաց պատերազմների անցքերի ճանօթանալուն մասնաւորապէս: Ըսելացնենք այստեղ, որ հայկական ձեռագրերի մի շատ հարուստ հաւաքածու սեպհականութիւն է դարձած այսօր Փարիզի Ազգային Գրադարանի:

Ինչպէս տեսանք Ֆրանսիայում կլխաւորապէս երկրի կառավարութիւնն էր, որ՝ սկսել տալով հայոց լեզուի ուսումը նախ կրօնական տարածումի (պրոպագանդի) համար և ապա առաւելապէս գիտնական նպատակով՝ այդ լեզուի յատուկ ամբիոն անգամ հիմնեց՝ հրատարակելով հայ ձեռագրերը՝ իրանց թարգմանութեամբ:

Գերմանիայում ընդհակառակը պաշտօնական նախաձեռնութիւնը հայագիտութեան նկատմամբ բոլորովին բացակայ է եղած և միայն գիտութեան սիրով առաջնորդուած գիտնականներ առանձնապէս պարապել են հայոց լեզուի ուսումնասիրութեամբ: Սոցանից առաջինն եղաւ Ի. Զ. Հիդէն «Thesaurus linguae armenicae antiquae et hodiernae» գործարան հին ու նոր հայոց լեզուի գրքի հեղինակը, որ իւր աշխատութիւնը հրատարակեց 1711-ին: Սա՝ կամենալով ուսումնասիրել հայոց լեզուն նոյն իսկ հայկական երկրում, մի երկար ու վտանգաւոր ճանապարհորդութիւն արաւ Թուրքիայի միջով:

Ներկայ դարուս սկզբին Հայերէնը ամենանշանաւոր լեզուագէտների համար ուսումնական խուզարկութեան նիւթ դարձաւ, որով և Բօպ, Վինդիշման, Նէյման, Պէտերման, Սպիգէլ, Լագառդ, Նօէլդէկէ, Գիւտշմիդ, Չիւբշման, Ֆր. Միւլլէռ, Բիւզէ և այլք պարապելով՝ իրանց աշխատութեամբ լուսաբանեցին մանաւանդ լեզուաբանական խնդիրներ:

Մի կողմն թողնելով Միխիթարեան Միաբանութեանց գրական գործունէութիւնը և դանազան ժամանակներում Եւրոպայի այլ և այլ երկիրների մէջ երևցող գիտնականների աշխատութիւնները՝ օրինակ Անգլիայում Վիստոնի եղբարց, Բէլգիայի մէջ Ֆ. Նէվի, Իտալիայում Հայր Կասէլէտիի և այլոց՝ անցնինք այն աշխարհին, ուր արևելեան լեզուները առհասարակ և Հայերէնը մասնաւորապէս ուսումնասիրում են եռանդով և յաջողութեամբ: Խօսքս Ռուսաստանի մասին է, ուր այս ուսմունքները աւանդվում են թէ գիտնական և թէ վարչական կարևորութեան նպատակներով:

Ռուսաստանը՝ մեծապէս զգալով իւր առաքելական պաշտօնը—քաղաքակրթութիւն տարածելու Ասիայի մէջ, և հետզհետէ լայնացնելով իւր կայսրութեան սահմանները, հարկաւոր համարեց ձեռնամուխ լինել արևելեան լեզուների ուսումնասիրութեան, որի կարիքը անդադար աճում, մեծանում էր: Եւ ահա ներկայ դարուս սկզբին (1817-ին) հիմնեցին այդ երկրում մի քանի ուսումնական կենդրոններ, ուր պիտի աւանդուէին յիշեալ լեզուները:

Ռուսաց կայսրութեան սահմաններում գտնուած ստորին ու միջնակարգ դպրոցներից զատ՝ ուր տեղացի մանուկներին աւանդում են իրանց մայրենի բարբառը՝ արևելեան լեզուների ուսումը մուտ գործեց նոյնպէս Օդէսայի Ռիշըլիէօի Լիցէոնում, Կազանի և Պետերբուրգի (1854) համալսարաններում: Պետերբուրգի համալսարանը մինչև անգամ մի առանձին բաժին էլ (ֆակիւլտէ) հիմնեց այդ նպատակով: Բացի սորանից Ռուսաց արտաքին գործոց նախարարութիւնը 1823-ից ունի և պահպանում է արևելեան լեզուներ ուսումնասիրելու մի բաժանումն: Յիշենք վերջապէս Մոսկվայի «Լազարեան Ճեմարանը արևելեան լեզուաց», որ հիմնուած և պահպանվում է նոյն Լազարեան ազգանունով առատաձեռն ու բարեգործ հայ ընտանիքի ծախսով:

Հայոց լեզուի ուսումը մտցրած է ոչ միայն հին Հայաստանի Ռուսաց բաժնի դպրոցներում, այլ և նոյնպէս Կազանում, Սիմֆէրոպոլի մէջ և Ստավրոպոլում: Այդ ուսման նպատակն է, ինչպէս որ վերև արդէն բացատրեցի, թէ լրացնել հայ ժողովրդի կարիքը իւր մայրենի լեզուն ճանաչելու մէջ և թէ տեղական վարչութեանց համար թարգման—պաշտօնեաներ պատրաստել:

1839-ին էր, որ Կազանի Համալսարանում հիմնեցին բուն գիտնական նպատակով հայոց լեզուի առաջին ամբիոնը: Սորա համար կամենում էին հրաւիրել Բեռլինի Համալսարանի նշանաւոր պրօֆէսօր Պէտերման Հայագէտին, բայց այս մտադրութիւնը չ'իրագործուեց: Այդ ժամանակ կառավարութիւնը երիտասարդ գիտնական Նազարեանցին, որ իւր ուսումը ստացել էր Գօրպատի Համալսարանում, ուղարկեց Պետերբուրգ, որպէս զի այնտեղ պատրաստուի նա պրօֆէսօրութեան՝ Ֆրահնի և Բռօսսէ ակադէմիստների առաջնորդութեամբ: Այսպէս Նազարեանցը 1842 թ. նշանակուեց պրօֆէսօր հայոց լեզուի Կազանի Համալսարանում և շարունակեց իւր այդ պաշտօնը մինչև 1848-ը:

Պետերբուրգի Համալսարանում հայոց

լեզուի ամբիոնը հիմնուեցաւ 1844-ին։ Վերջին երեսուն տարին այդտեղի պրօֆէսօրի պաշտօնը վարում էր Հանդուցեալ Պատկանեանը։ Մի վաղահաս մահ՝ կորզելով նորան իւր ուսումնական գործունէութեան միջից, զրկեց գիտնական աշխարհին այն աշխատութիւններից, որոնց տակաւին կարելի էր սպասել։ Լազարեան Ճեմարանում վերջին ժամանակները Հայոց լեզուի պրօֆէսօրներն էին Մսեր և Էմին։ Այս յիշեալ ուսումնականների մատուցած ծառայութիւնը գիտութեան՝ արդէն բաւականին յայտնի լինելով, աւելորդ եմ համարում խօսել այստեղ այդ առթիւ։ Բաւական է միայն յիշել, թէ բացի Ռուսաստանի գիտնականների անկախ հետազօտութիւններից՝ Հայոց պատմագրների բազմաթիւ ձեռագիրները՝ տպագրութեամբ լոյս տեսնելով այս վերջին երեսուն տարուայ ընթացքում, մատչելի դարձան եւրոպական գիտութեանը։ Էջմիածնի սուրբ Աթոռը այս վերաբերմամբ շատ նշանաւոր ծառայութիւն մատուցեց։ Գէորգ IV-րդ սրբազնագոյն Պատրիարք—կաթողիկոսի հրամանով Էջմիածնի տպարանից լոյս տեսաւ մի ամբողջ շարք Հայ պատմագրների՝ սկսած X-րդ դարուց մինչև XVII-րդ դարը, որոնց ձեռագիրները պահուած են նոյն նախաթոռ Վանքի զրադարանում, որ մասնաւորապէս Հարուստ է գրականութեան այդ տեսակ յիշատակարաններով։

Բացի վերոյիշեալ գիտնականներից՝ պարտք եմ համարում յիշատակել նոյնպէս Պետերբուրգի Գիտութեանց Կայսերական Ակադէմեայի անդամ Հանդուցեալ Բռօսսէին, որի աւելի քան թէ յիսնամեայ գիտնական գործունէութեան մեծ մասը նուիրուած է եղած Հայագիտութեանը։ Նորա տոկուն հետազօտութիւնները մի լոյս սփռեցին Հայոց լեզուի, հնախօսութեան, Հայոց պատմութեան և ժամանակագրութեան բազմաթիւ խնդիրների վրայ։ Նորա պատմական աշխատութեանց ամենանշանաւորը Լանգլուայի ձեռնարկած «Collection d'historiens armèniens» վերնագրով Հայ պատմագրների հաւաքածուի թարգմանական հրատարակութեան շարունակութիւնն է։

«Bibliographie analytique des ouvrages de M. Brosset» 44 տպագրական թերթերից բաղկացած մի մեծ Հատոր—«Վերլուծական մատենախօսութիւն Բռօսսէի աշխատութեանց» մակագրով, որ Հրատարակել է իւր որդին, ապացոյց կարող է լինել նոյնպէս թէ յիշեալ գիտնականի անդուլ գործունէութեան և թէ Հրատարակչի որդիական երախտագիտութեան։

Ներկայացնելով ձեզ այս համառօտ Հայեացքը Հայոց լեզուի ուսումնասիրութեան վրայ Եւրոպայում՝ ես կարող էի նոյնպէս մի տեսութիւն անել եւրոպացիների արած ճանապարհորդութեան մասին Հայաստանի մէջ՝ սկսած Մարկո-Պօլոյից մինչև նորա-գոյն ժամանակները։—Համառօտ մի տեսութիւն մի ճիշտ գաղափար կարող էր տալ ձեզ, թէ ինչ է եղել Հայաստանի քաղաքական և Հասարակական վիճակը վերջին Հինգ երկար դարերի ընթացքում։ Բայց այս բանը չափազանց կ'ընդլայնէր իմ ներկայ զեկուցման սրտէն սահմանած շրջանակը։ Այնուամենայնիւ մի երկու րոպէի Համար միայն ձեր ուշադրութիւնն իմդրում, որպէս զի յիշեցնեմ ձեզ, թէ այսպիսի առաւտաւայել կերպով մեզ Հիւրասիրող այս երկիրը (Նորվէգիան) նոյնպէս միշտ օտար չէ եղել Հայոց լեզուի ուսումնասիրութիւնից։

Դեռ 1723 թուականին՝ այսինքն տասը տարի առաջ, քան թէ տպագրութեամբ լոյս կը տեսնէր Լօնգօնում Մովսէս Խորենացու պատմութիւնը՝ Վիստոնի եղբայց ձեռքով՝ լատիներէն թարգմանութեան Հետ միասին,—Ստօկհօլմի մէջ Հայոց այդ մեծանուն պատմագրի աշխատութեան մի Հատուած տպագրուեցաւ՝ նմանապէս լատին թարգմանութեամբ։

Հանուի Բռէնէռ Խորենացու պատմութեան այդ Հատուածի թարգմանիչը իւր յառաջաբանի մէջ խոստանում էր ձեռնարկել Մովսէս Խորենացու ոչ միայն ամբողջ պատմութեան թարգմանութիւնը, այլ և այն «աշխարհագրութեան», որ Խորենացուն են վերագրում։ Սակայն՝ որչափ մեզ յայտնի է, թարգմանչի այս մտադրութիւնը չ'իրագործուեցաւ։

Եւ արդ Եւրոպայի ամենալուսամիտ գաՀակալներից մէկի այն բարձր Հովանաւորութիւնը, որ շնորհում է Նորին Վեհափառութիւնը թէ գիտութեանց և թէ իւր նախաձեռնութեամբ Ստօկհօլմում գումարուած արևելագէտների ժողովին, մի գրաւական են Համարում նոյնպէս այն ապագայ զարգացման, որ պիտի ունենայ արևելագիտութիւնը Սկանդինաւ երկրներում։

Թարգմ. Ֆրանս. ՅԱՐՈՅ

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

27 ապրիլի, 1890 թ.։

Ամսոյս 23-ին, առաւօտեան ժամի 10-ին, ս. Էջմիածնի վանքի զանգակը հրաւիրեց միաբանական ուխտին դէպի սուրբ տաճարը, ուր եպիսկոպոսներն ու վարդապետները զգեստաւորուած, իսկ սարկաւագներն ու երգեցիկ խումբը շապիկ հագած, աւետարանով ու խաչով, խաչվառով ու բուրվառով թափոր կազմելով գնացին դրսի պարսպի հրապարակը՝ ճեմարանի աշակերտների և ուսանողների հետ։ Թափորի գլխին զգեստաւորուել կանգնել էր Սինօդի անդամ և լուսարարապետ Երեմիա սրբազան եպիսկոպոսը, նորա աջ և ձախ կողմերը կանգնած էին երկու բուրվառակիր սարկաւագներ և սոցա առաջ գալիրների երգիչ խումբը։

Երկնանման լուսոյ խորանը՝ Միածնափէյի Տաճարը շքեղ զարդարուած էր Վեհապետի կարգադրութեամբ։ Վառած էին բազմաթիւ և բազմազան չափեր, կանթեղներ և մոմեր, փրուռած էին գեղեցիկ և մեծագին գորգեր և ոսկեհուռ սփռոցներ, բազմեցրած էին սրբոց մասունքները ականակուռ խաչերով և ոսկով ու մարգարտով ընդելուզած պատեաններով։

Վանքի դռներից մինչև ներսի պարսպի դուռը փռած էր կարմիր նոր մահուդ, որի վրայ սփռուած էր ոսկեճամուկ դիպակ. ապա բաւական թանձրութեամբ կանաչ ու ծաղկունք էին տարածուած ճանապարհի վրայ մինչև Ծառադարդ զբօսավայրը։ Արտաքին պարսպի դռան կամարը զարդարուած էր կանաչահիւս պսակով։ Թէ Վաղարշապատ գիւղի ամբողջ բնակիչները մեծ և փոքր և թէ հարևան գիւղերից եկած մեծ բազմութիւնը բռնել էին ճանապարհի այո և այն կողմերը, այնպէս որ ընդարձակ հրապարակը, փողոցն ու կտուրները լիքն էին մարդկանցով, որոնք խռնուելով դիտում էին արքայական գալուստը։

Վանքի զանգերը հնչեցրին, և ահա հեծելոց ասպետութեամբ ու կառքեր երևեցան ճանապարհում բարձրացող փոշու միջից։ Իտալիայի գահի ժառանգ Վիկտօր-Էմանուէլը, շրջապատուած իւր հետևորդներով և շատ ձիաւորներով, ժամանեց, և կառքից իջնելով, ողջունեց Հայոց հոգևորական դասին, որ թափորով սպասում էր նորա գալստեանը։ Լուսարարապետ Երեմիա սրբազանն արդէն խաչն ու աւետարանը կրծքին բռնած ունէր։ Գալիրները ներդաշնակ ձայնով երգեցին «Ցաւուրս վերջին ժամանակի» շարականը։ Թափորը, ծանր շարժուեով, հասաւ Իջման սեղանի առաջ, ուր դրուած էր աթոռ, որի մօտ հրաւիրեցին և արքայորդուն։ Այնտեղ Հայոց ազգի Հայրապետը ընդունեց Հարձրաստիճան Եկուորին, ասելով. «Օրհնեալ է այս օրը, որ ամենախնամ Աստուած իւր բարի հրեշտակի թևերով անդորր ու խաղաղ Հասոյց Ձեր Հարձրութիւնը այստեղ, Հայաստանի Այրարատեան աշխարհը, որ երկիցս եղել է խանձարուր մարդկութեան. յոյս ունինք, որ մեր այս հնադարեան Միածնաէջ տաճարը և նորանում պահպանուած հնութեան

փառքի նշխարներն ու մասերը դոյզն ինչ բաւականութիւն պիտի տան Ձեր հետաքրքրութեանը։ Թող Տէր Աստուած օրհնէ Իտալիայի թագաւորութիւնը և Իր հովանու տակ անսասան պահէ Իտալիայի ազգն ու երկիրը, և Ձերդ Բարձրութեանը ողջ և առողջ հասցնէ հայրենի գահը ժառանգելու»։

Արքայորդին յայտնեց իւր խորին շնորհակալութիւնը։ Երբ ճեմարանի ուսուցիչ պ. Վարդգէս Սուրէնեանը այս շնորհաւորական խօսքերը խտալերէն և հայերէն թարգմանեց, այն ժամանակ լուսարարապետ Սրբազան եպիսկոպոսը ասաց. «ս. եկեղեցւոյս» և «ս. խաչիս» քարոզները, իսկ Վեհափառ կաթողիկոսը «ի մէջ տաճարիս» մաղթանքը և «պահպանիչ» աղօթքով օրհնեց բարձրաստիճան Եկուորին և ժողովուրդը։ Ապա Գեր. Ներսէս և Սարգիս Սրբազան եպիսկոպոսները Վեհափառի ակնարկութեամբ հրաւիրեցին Նորին Բարձրութեանը հետևորդներով հանդերձ հնութեանց թանգարանը, ուր արքայորդին մեծ ուշադրութեամբ նայում զննում էր ամեն բան. հետաքրքրվում էր Հայոց արքաների թագերով, գաւիսոններով. ուզեց բանալին և բացեց այն պահարանը, ուր դրուած տեսաւ ապակու միջով հին դրամներ նա մանրակրկիտ և նրբազննին գիտութեամբ նայում, դիտում էր Հայոց թագաւորների՝ մանաւանդ Լուսինեանների դրամները, որոնց վերայի գրերն ու դրոշմները ընդօրինակեց իւր հետևորդներից մինը։ Վանքի մէջ գտնուած բոլոր մասունքները տեսնելուց յետոյ դուրս եկաւ պտտեց և նորա շուրջը ու պատերի վրայ եղած խաչերի ու դրուածների մասին տեղեկութիւններ էր քաղում և գրել տալիս չիշատակարանում։ Այդ միջոցին ճեմարանի երգեցիկ խումբը հոգենուագ եղանակով երգում էր «Արիացեալք առ հակառակս» ս. Վարդանանց շարականը։

Յետոյ արքայորդին գնաց մատենադարանը. կարդալ էր տալիս աչքի ընկնող հին ձեռագիրների գրած ժամանակը, հարցնում, իմանում էր բովանդակութիւնը և ում ձեռքով գրուելը։ Եւ այդտեղից գնաց վեհարան, ուր ընդունեց Նորան Վեհափառ Կաթողիկոսը բոլոր եպիսկոպոսների և նախապատիւ վարդապետների հետ. պատրաստած էր ճոխ և արքայավայել սեղան։ Սեղանի գլուխն նստած էր Վեհափառը, նորա աջ կողմըն էր Իւր մեծ հիւրը։ Սեղանակից եղան գեր. Մկրտիչ արքեպիսկոպոսը, Երևանի նահանգապետը, Պրինցի հետևորդները թէև ընդամենը ո՞ւր հոգի։ Բացի այս մի սեղան էլ պատրաստուած էր միւս դահլիճում, ուր ճաշում էին միւս եպիսկոպոսներն ու աշխարհական պաշտօնեանները, թուով 30 անձինք։ Ճաշը, որ տևեց ժամուկէս, խիստ ուրախ անցաւ։ Երկու վեհերը, թարգմանին հետներն առնելով, մտան ծաղկեայ դահլիճը սուրճ խմելու։

Այդտեղ Իտալիայի գահի ժառանգը կամեցել է տեղեկանալ Հայոց թուականի անագան սահմանուելու առիթը, այսինքն Քրիստոսի ծնընդից 552 տարի յետոյ սկսուելու պատճառը և տրուած բացատրութիւնները ուշադիր լսելէ։ Նա լսօսել ու տեղեկութիւն է հաւաքել Մասիս և Արագած սարերի հրաբղխային յատկութեանց մասին, և թէ նոքա, այդ երկու հրկայական լեռները, ինչ ներգործութիւն կարող են ունենալ դաշտի, օդի ու մետորիաների փոփոխութեանը վերայ, և ապա պատմել է Վեհափառին իւր երկրի լեռների յատկութիւնները։

Երբ Վեհափառը իւր ձեռքով պարգևեց ականակուռ քարերով ու գոհարներով զարդարած մի խաչ, որի մէջ դրուած էր Կենաց փայտի մի մասը, այն ժամանակ Պրինցը ասաց. «Այս սուրբ էջմիածինը և ամենայն Հայոց հայրապետի քաղցր ընդունելութիւնը ես երբէք, երբէք մոռանալու չեմ»։ Դառնալով դէպի թարգմանը, աւելացրեց. «շեշտիր այս խօսքերը երբէ՛ք, երբէ՛ք մոռանալու չե՛մ»։

Եւ մնաք բարեաւ ասելով, վեհարանից իջաւ գնաց ճեմարանը տեսնելու, մտաւ այնտեղի թանգարանը և դրատունը, ուր իւր անունը գրեց այնտեղ դրուած գրքում ընդհանուր այցելուների անունաց կարգը. նոյնը արին և հետևորդները։

Այդ ժամանակ ճեմարանի աշակերտները երգեցին երգեր. ճեմարանի առաջ կարգով կանգնած սպասում էին խումբ խումբ ասպազէններ, որոնց մէջ լսկոյն աչքի էին ընկնում թիւրքերը իրանց տարօրինակ և խայտաճամուկ հանդերձներով ու հնաոճարեան տէգերով։ Նորին Բարձրութիւնը 100 րուբլի շնորհելով ճեմարանի աշակերտներին, մեծ շնորհակալութիւն յայտնեց տեսուչ հայր Նահապետին և նստելով կառք՝ ուղևորուեցաւ Երևան։

Ե. Տ. Գ.

***

Ռէյտերի հեռագրական գործակալութիւնը Կ. Պոլսից հեռագրում է ապրիլի 30-ին, որ տաճկաց արդարադատութեան նախարար Ջեվեդ-փաշան զրկուել է իւր պաշտօնից, շնորհիւ անգլիական և գերմանական դեսպանների տուած զեկուցման նորա բռնած ընթացքի մասին Մուսայբէյլի դատում։

***

Անցեալ կիւրակի Քամոյեանց եկեղեցում կատարուեց Բաֆֆիի մահուան երկրորդ տարեդարձի առթիւ հոգեհանգիստ։

Այս տարի անցեալ տարուանից աւելի մեծ բազմութիւն կար։ Եկեղեցին լիքն էր հանդիսականների մի մասը հաւաքուել էր եկեղեցու գաւթում։ Ներկայ էին գրականութեան և մամուլի բոլոր ներկայացուցիչները։

***

## ՆԱՄԱԿ Պ. ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒՆԻ

—

Այսօր տօնվում է Ձեր դպրական գործունէութեան քսանևհինգամեակը։

Արդեօք մի թիւրիմացութիւն չէ Ձեր գործունէութեանը դպրականանուն մկրտել։

Բաֆֆիի գործունէութիւնը, որի յօբելեանը տօնեցին, գրականական էր, Գամառ-Քաթիպայի, Սունդուկեանցի, Բարխուդարեանցի և քանի մի այլոց գործունէութիւնը, որոնց յօբելեանները չը տօնեցին, գրականական է, Հ. Ալիշանի 50 ամեակը, որ մայիսի 13-ին պէտք է տօնուի, գրականական է, Պռօշեանցի յօբելեանը, որ երբէք չի տօնուիլ, գրականական է, իսկ դուք գրականութեան ոչ մի ճիւղ չէք մշակել, բուն գրականական ասպարիզում ոչինչ չէք արտադրել։ Ձեր գործունէութիւնը կարող է բացառապէս հրապարակախօսական անունը կրել։

Արդեօք քսան և հինգ տարի կա՞յ, որ Դուք իբրև հրապարակախօս գործում էք մեր պարբերական մամուլի մէջ։

1865 թուականին ուսանող ժամանակ, դուք մի յօդուած էք գետեղել «Փեղու Հայաստանի» լրագրում. այնուհետև ամբողջ 1866 թուի ընթացքում մի տող գրած չունիք. հետագայ տարինները Դուք տարէնը գուցէ մի երեք բան էք գրել միանգամայն տարբեր բովանդակութեամբ պատահական նիւթերի մասին և ո՞վ է նա, որ ուսանողութեան միջոցին չէ մեղանչել գրականութեան դէմ։

Այսպէս ուրեմն Ձեր հրապարակախօսական գործունէութիւնն իսկ այն ժամանակամիջոցը չէ բոլորել, որ որ և է հասարակութեան մէջ ընդունուած է տօնելու։

***

1886-ին Պետերբուրգի ազգեցիկ գեղարուեստական շրջանների նախաձեռնութեամբ ամբողջ Ռուսաստանը կամենում էր տօնել մեր հայրենակից Յովհաննէս Այվազովսկու գեղարուեստական գործունէութեան 50 ամեակը, աչքի առաջ ունենալով, որ 1863-ին հռչակաւոր նկարչի առաջին պատկերները՝ ի ցոյց հանուեցան Ակադեմիայի դահլիճներում գրաւելով հասարակութեան բոլոր շրջանների ուշադրութիւնը։

Պատկառելի ծերունին մերժեց այդ առաջարկութիւնը ասելով, որ նա իւր գործունէութեան սկիզբը համարում է 1837 թիւը, երբ առաջին անգամ արժանացաւ ոսկէ մեդալ ստանալու Ակադեմիայից իւր

պատկերների համար: Այս համակրելի յոբելեանը տօնուեցաւ 1887 թուի սեպտեմբերին:

Մի քանի ամիս առաջ գրականութեան հետ լոկ առևտրական կապեր ունեցող, մօգանեներին նուիրուած մի ամսաթերթ առաջարկեց տօնել Ձեր գրականական գործունէութեան 25 ամեակը և Դուք, որ աւելի պակաս տարի էք ապրել աշխարհիս երեսին քան բովանդակում է իւր մէջ լիշեալ մեծ նկարչի տօնելի շրջանը, հարկ չը համարեցիք մերժել այդ պղտոր աղբիւրից բղխած առաջարկութիւնը, խնդրելով յետաձգել այդ տօնախմբութիւնը մինչև 1897 թիւը, երբ լրանում է, Ձեր խմբագրական գործունէութեան 25 ամեակը:

Այսքան մեծ է արժանաւորութեան և մեծամտութեան մէջ եղած զանազանութիւնը:

***

Թէ ինչ շարժառիթներ են առաջնորդել յօբելեանի նախաձեռնողներին, թէ ինչ սկզբունքներ են ղեկավարել ինքնակոչ կարգադրիչ մասնաժողովին, թէ ինչ միջոցների են դիմել այդ մարդիկը մանաւանդ գաւառներում՝ յաջողութեան հասնելու, թէ ինչ կողմնակի նպատակների են կամեցել հասնել թէ «Պշակի» մարդիկը և թէ «Պշակը» անձնական նպատակների համար զէնք գարձնողները մի արհեստական տօնախմբութիւն հնարելով, այդ բոլորը կը պարզէ շատ մօտակայ ապագայն:

Պամուլի մի գործիչին նկատմամբ վարձատրել՝ ահա, այն միակ համակրելի նպատակը, որ ունեցել են «Պշակի» կուսակիցները և ոչ կուսակիցները և որի իրագործման ցանկութիւնը միմիայն թելադրեց մեզ մինչև ներկայ օրը լռութիւն պահպանել:

Կան մարդիկ և այդ մարդկանց թիւը մեծ՝ կրքերով ղեկավարուող, միջոցների մաքրութիւնն ի նկատի չ'առնող՝ հասարակութեան մէջ փոքր չէ, որոնք հակառակորդ գործիչին յաղթելու համար աշխատում են նորա նկատմամբ նսեմացուցիչ լուրեր տարածել. կարծես նկատմամբ միջոցների նուազումը կարող է որոշ սկզբունքներով ոգևորուած մարդու գործունէութիւնը յարատև կերպիւ ջլատել:

Մենք այդ մարդկանցից չ'ենք: Մենք համոզուած ենք, որ հակառակորդի հետ պէտք է ոչ միայն ազնիւ այլև համանման զէնքերով պատերազմել: Նպատակը սրբագործում է միջոցները սկզբունքը երբէք մամուլի խնդիր չէ կարող լինել:

***

Մեր ժամանակը, երբ հայ հասարակութեան մէջ բացառապէս տիրապետում են նկատմամբ ձգտումներ, երբ նոյն իսկ բարձր ուսում ստացած անձինք կեանքի յարմարութիւնների ետևից են ընկած կամ անտարբերութեան կատարելատիպ են ներկայացուցիչները, պէտք է ինքնըստինքեան յարգելի համարուեն այն սակաւաթիւ մարդիկը, որոնք ընտրել են բարոյական շահերի հետ անմիջական կապ ունեցող ասպարէզները:

Ուստի բնական է, որ հասարակութիւնը, որի մէջ պարտաճանաչութեան զգացմունքը երբէք բոլորովին հանդած չէ կարող լինել, վարձատրէ մեր լիշած գործիչներին, իբրև այդպիսիներին, իւր խղճմտանքի առաջ պարզերես լինելու համար:

Բնական է, որ հասարակութեան այս մասից անկարելի է կրիտիկական յարաբերութիւն պահանջել:

Սակայն այսօրուայ օրը մեզ վրայ պարտք կայ երկու խօսքով բացատրել հասարակութեանը, թէ՞ ինչու շատերը և նոցա հետ մենք չ'ենք մասնակցում Ձեր յոբելեանին:

***

Կատարում ենք այդ պարտքը:

1) Մեծարանք մատուցանել Ձեզ կ'նշանակէ այդ շատերի և մեր կողմից անարգել այնպիսի սկզբունքներ, որ մեր մամուլի ամէն մի պաշտօնեայի համար սուրբ պէտքէ համարուէին:

2) Տօնել Ձեր յոբելեանը նշանակում է համակրել այն դերքին, որ Ձեր լրագիրը բռնել է տիրապետող հոսանքի նկատմամբ:

Այս հիմունքները արդելք պէտք է լինէին ամէն մի հայի համար համակրութեամբ վերաբերուելու դէպի այսօրուայ օրը:

3) Բացի այս մենք մեր ներկայութեամբ չ'ենք կամենում վաւերացնել Ձեր բռնած ընթացքը դէպի մի դարևոր գործօն, որ դուք հնացած հաստատութիւն էք կոչում:

4) Համակրել Ձեզ կը նշանակէ հակադրել այնպիսի գործիչներին, որոնք հազարապատիկ աւելի մեծ երախտիք ունին մեր ազգի վրայ և որոնց Դուք, պ. Արծրունի, անուանարկել էք և անարդութեամբ ցեխոտել:

Բայց մի մի չը թուենք:

Ամփոփենք մի ընդհանուր դրութեամբ, որի պարզելը, քանի որ կան և թերահաւատներ, թող մեր պարագը լինի, այն է մեծարել Ձեր գործունէութիւնը նշանակում է հասարակական պարտաճանաչութիւնից զուրկ լինել: Dixi!

Կարծում ենք, որ այսքանը այսօրուայ համար բաւական է, գուցէ մինչև անգամ շատ է:

***

Դուք 1882-ին 11 տարի իբրև խմբագիր գոյութիւն ունենալուց յետոյ չը կամեցաք պատուել Ձեր ներկայութեամբ «Մեղու Հայաստանի» լրագրի 25-ամեայ իսկական գոյութեան յոբելեանը, հիմնուելով Ձեր թշնամական յարաբերութիւնների վրայ դէպի այդ թերթը:

Այսօր մենք 15 տարի իբրև խմբագիր գործելուց յետոյ չենք կամենում մասնակցել Ձեր հրապարակախօսական գործունէութեան երևակայական քսանևհինգ ամեակին, Ձեր թերթը վնասակար համարելով հասարակական զարգացման համար:

Կամենում ենք հաւատալ, որ Դուք նոյնչափ անկեղծ վարուեցիք 1882-ին, որքան անկեղծ ենք վարվում այսօր մենք:

Ս. Յ.

Մայիսի 6-ին, 1890 թ.:

# ՖԵԼԻԵՏՕՆ

## ՂԵՒՈՆԴ ԱԼԻԶԱՆ

(Քանի մի թերթ իմ յիշատակարանից)

«Վենետիկ, ս. Ղազար, 3 յուլ. 86

Ազնիւ բանասէր պարոն,

Թուղթդ ընդունելէս առաջ կարդացինք լրագրայ մէջ...

Փափագդ գալու ի Վենետիկ և մեր լեզուի և պատմութեան տեղեկութիւնդ աւելացնելու, կարելի է, եթէ բնակիս ի քաղաքին, և ուզած կամ սահմանեալ ատեն երթաս ի Մուրատ—Ռափայէլեան վարժարան, եթէ այնպէս պատշաճ դատուի, կամ գաս ի վանս մեր. վանքի նաւակաւ ալ կրնաս գալ և երթալ մեր նաւակի սահմանած ժամերուն. . .

Ն. Ղեւոնդ Ալիշան Մ.

Ահա այն նամակը, որ ես ստացայ ի պատասխանի իմ գրութեանս Բեռլինից, որով թոյլտուութիւն էի խնդրում Մխիթարեանց վանքում հայերէնով պարապելու:

Գերմանիոյ մայրաքաղաքը հազիւ էր դադարել իւր դիւցազն կայսեր իննսնամեայ տօնախմբութեան ժխորից. դեռ ևս վխտում էր

ծովացեալ քաղաքում օտարականների բազմութիւնը, դեռ ևս փողոցները զարդարուած էին 1887 թ. մարտի 1-ի հանդիսի չաղթական կամարներով, երբ ես վերջին հրաժեշտս տուի այն փոքրիկ ընկերական շրջանին, որ ինձ ուսանողութիւնից փշրտացրեաց էր ուղեկցում։ Դեռ ևս հնչում էին ականջիս հրաժեշտի երգի վերջաբանը... Ade! Ade... երբ կառախումբը սլանալով ծանկեց աչքերս հեռվին։

Ո՜րչափ հրաշալի է բարեշէն երկրների տեսքը ճանապարհորդութեան ժամանակ, լայնածաւալ, գեղեցկագիր և նկարէն քաղաքներն, գեղերն և գղեակները յաջորդում են միմեանց շղթայաձև, դաշտերն ու բլուրները շարայարեալ պարտէզների են նման, մի թիզ գետին անգամ չը կաչ անմշակ, մարդուս ձեռքի և խելքի հետքերն միայն կրում է երկիրը, ամայութիւն և անգործութիւն անյայտ մնապատկերներ են Եւրոպայուն։ Ինչու՞ հակադիր տպաւորութիւնները վրդովում են մարդուս միտքը և թոյլ չեն տալիս ամբողջովին վայելել կեանքի ընձեռած գեղեցիկ վայրկեանները...

Այսպիսի խորհրդածութեամբ պաշարուած էի, երբ կառախումբը կանգ առաւ Գենուայում, Նշանաւորապէս քաղաքում, Ֆրանկֆուրտում։ Ֆրանկների գղեակը, միջնադարեան աւատական իշխանների և եպիսկոպոսների մայրաքաղաքը, ազատ քաղաքը, գերմանական միաբանութեան սակաւաթեայ մայրաքաղաքը այսօր իրաւամբ կարելի է հրէից մայրաքաղաք կոչել, որոնց խելքի, նենգամտութեան և հարստութեան ամենամեծ վկայութեան նշաններից մէկն է Գէօթէի հայրենիքը։

Մտքերի արագաթռիչ ընթացքը ղէպի պատմութեան խորերն ընդհատում են չնորհիւ դարուս հաղորդակցութեան երեսվառ միջոցների, փարթամ Ֆրանկֆուրտից արդէն վաղուց հեռացել էր կառախումբը և մօտեցել այն գետին, որ ափերի տիրապետութեան համար արևմտեան երկու հզօր ազգերն դեռ չեն գադարել կռուելուց, Ծովանման Հենոսի անցնելով արդէն Հելուետացւոց ազատ երկրումն էինք։ Մաքսաւորները թէ ի հնումն և թէ այժմ սիրուած չեն եղել երբէք, այժմ իսկ ամեն տեղ մարդուս մի նոր երկրում դիմաւորողները թէև նոքա են, բայց ամենամենայնիւ չեն վայելում ոչ ոքի համակրութիւնը։ Մաքսաւորը միևնոյն իսկ ազատ Զուիցերիայում զգալ է տալիս ուղևորին իր զարաւոր արժանաւորութիւնը։

Առաջին զուիցերական քաղաքը, ուր գիշերեցի, հազէյն էր։ Թերևս անհաւատալի թուի, բայց այդ աւանի նման փոքրիկ քաղաքը, Եւրոպայի ամենահարուստ քաղաքն է, եւրոպացիք այդ քաղաքը մեղրօծների և կամ զուիցերական ազնուականների քաղաքն են անուանում։ Զարմանալու չէ արդեօք, որ Զուիցերան էլ իր ազնուականներն ունի։ Այո զարմանալի է, բայց երբ ամերիկեան ե ա ն կ ի ն ազնուականութեան է ձգտում և հայ չարչին իրան ազնուական է կոչում, ինչու՞ զուիցերական բ ա ւ ե ր ն (գիւղացին) էլ արիստոկրատ չը պիտի կոչուի։ Մանալ է հազէլի տեսքը, քաղաքացւոց դղեկնման հին բնակարանները կատարեալ պատեր են ռամկավարական վարչութիւնից դժգոհ ազնուապետական հազէյցոց։

Եւրոպական ազնուականների արտաքին և շլայնող նշաններից մէկն է եղել միշտ կրօնական ուղղութիւնը։ Հազէյցիք ևս այդ կողմից չետ չեն մնում, նրանք առանձին կրօնական ուղղութիւն ունին, ամենահին բողոքական քարոզչական ընկերութիւնները այդ քաղաքից են Տագումն առել, նրանց propaganda fides-ը նշանաւոր Ծառայութիւններ է արել բողոքականութեան։ Հաւերս էլ վայելել ենք հազէյցոց քարոզիչների ցանած սերմերի պտուղները, Կովկասեան առաջին բողոքական քարոզիչները այդ քաղաքի ընկերութիւնից էին ուղարկուած, և մեր quasi բողոքականները դարձ ծնունդն են։ Դեռ այժմս ևս նրանց գարոցում հայ ուսանողներ են պատրաստվում ամենահին քրիստոնեաներիս քրիստոնեայ դարձնելու։

Թէ ինչ կարող է անել անհատական բարեգործութիւնը, այդ կարելի է տեսնել հազէլում, ծանօթանալով այդ քաղաքի համալսարանին թանգարանին և գրատանը, որոնք մասնաւոր նուէրներով են ճոխացած և պահպանուած։ Հայ բանասէրին անհնարին է առիթը փախցնել և չը ծանօթանալ Եւրոպայում որ և է հայագիտի հետ։ Քրպէն իսկ շնորհալի գիտնական հայագէտ և պատմաբան Բաումգարտէնին (Baumgarten). որ աներկբայ նորագոյն հայագէտ եւրոպացիների մէջ հմտագոյնն է, նա գասախոս է հին պատմութեան հազէլի համալսարանում, ուստի վճռեցի գոնել նրան։

Զարմանալի անձինք են գերմանական գիտնականները, նրանք ընդունակ են ժամանակից աշխարհը մոռանալու և ապրելու այն դիտողութեամբ, որով պարապած են։ Բաումգարտէնը ապրում էր քաղաքից մի չորս վերստ հեռու, մերձակայ արուարձանի , ճանապարհից դուրս մի բլրի լանջի վրայ, ուր միայնակ կանգնած էր նրա պարտէզապատ բնակարանը։

Երիտասարդ, նիհար, բարձրահասակ և ծանրագլուխ գիտնականը դիմաւորեց ինձ ուրախութեամբ և տարաւ իր պարապմանց սենեակը։ Սկսանք խօսակցութիւնը հայոց լեզուի, պատմութեան և մատենագրութեան պատմութեան մասին, ձեռագրերի և մատենադարանների մասին և նա ցոյց տուաւ ինձ իր քաղաքացիները զանազան ձեռագրերից։ Պատմեց ինձ իւր ուղևորութիւնն ի Վենետիկ և այնտեղ գտած սիրալիր ընդունելութիւնը, իւր զբաղումներն և հայր Ալիշանի հմտութիւնից քաղած օգուտները։ Ի վերջոյ յայտնեց, որ ինքը զբաղուած է Խորենացու պատմութեան

ԳԻՒՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՐԸՆ ՅԱՒԿԱՆԱՏՆԱՒՈՐ

հրատարակութեամբ, արդէն քննել է եւրոպական ձեռագրերից շատերն և երբ վերջացնի, մտադիր է գնալ Երուսաղէմ և Էջմիածին, որպէս զի բոլոր ձեռագրերի համեմատութեամբ վերականգնէ Խորենացու իսկական բնագիրն, որ մտադիր է հրատարակել յատկութեամբ թարգմանութեամբ հանդերձ, որի գլուխ գալուն ամենամեծ երաշխաւորութիւնն է յարգելի դիտնականի տակաւնութիւնը և աշխատասիրութիւնը։ Համակրելի հայագիտի ընտանեկան չարկի տակ գիշերելուց չետոյ, միւս օրն ուղեւորուեցայ դէպի Խոալիա։

Զուիցերիոյ գիւղատեսիլ լեռներն ու հովիտները, գեղածաձան լճերն, հրաշատես գիւղերն ու քաղաքները նկարագրելով երբէք այն հրաշալի բնութեան տպաւորութիւնը կարելի չէ հաղորդել. ուստի առաւել լաւ է լռութեամբ անցնել բնութեան և մարդկային հանճարի ու ձեռքի փայփայած այդ երկիրը։ Մուրք Գոտհարդի լեռնանցքի, այդ արուեստից մեծ հրաշալիքի միջոցաւ, հաղորդակցում են Ալպեան լեռներով



առհասարակ այդ երկրի ամեն մի անկեան բնական և գեղարուեստական հրաշալիքները, հնագոյն, միջին և նոր զարերը թողել են Խոալիայում իւրեանց գեղեցկագոյն հրաշակերտների հետքերը։ Խոալական քաղաքներից իւրաքանչիւրը մի որ և է առանձնայատուկ գեղեցկութիւն ունի, իսկ Միլանի գեղեցկութիւնն է նորա տեսքը, հոլակապ հին և նոր շինուածները և մարքորթիւնը, որ չատուկ չէ առհասարակ իտալական քաղաքներին։ Միլանը կենտրոն է այժմ իտալական արուեստագիտութեան և ի զուր չէ կոչվում մայրաքաղաք Լոմբարդիոյ։ Երեք հրաշակերտ կան այդ քաղաքում, որոնցից իւրաքանչիւրն իւր տեսակի մէջ աննման է, առաջին Միլանի մայր եկեղեցին կամ դոմը, երկրորդ նոր գերեզմանատունը, որ գեղարուեստական արձանների գանձի է նման և երրորդ աշխարհիս ընդարձակագոյն թատրոնը, Սկալան։

Միջօրէին ճեպընթաց գնացքը ուղևորում էր Վենետիկ, ուստի շտապեցի ըստ կարելւոյն շուտափոյթ հասնել նպատակիս. և ճանապարհ ընկայ դէպի Վենետիկ։

Ընդէն մութը գետինն առել էր, երբ մեր կառախումբը սկսաւ չամրաքայլ ընթանալ Վենետկի կղզին ցամաքի հետ միացնող հսկայական կամրջով և կանգ առաւ կայարանում։

Երեկոչեան մութը, քաղաքի մռայլ տեսքը, թխադէմ և չողիանդամ նաւավարները, որոնք կայարանում խռնուած էին, առանձին ազդեցութիւն արաւ վրաս։ Երբ նաւակ (gondol) նստանք և սկսանք նեղ ջրանցքներով սահել, բարձրաբերձ մարմարաշէն պալատները, մութը ջրանցքը, նաւավարների տեսքը և երբեմնակի արձակած ձայները, չիշողութեանս մէջ վերականգնեցին վենետկեան հասարակապետութեան ժամանակները։ Ամբողջ պատմութիւնը միանգամից կենդանութիւն ստացաւ, երևակայութիւնս ստեղծեց իսկոյն տասնից խորհուրդը, մատնութիւնները, դաւերն և գաղտնի մահերն, ջրասոյզ եղածներն ու դաւաճանուածները գրլուխս բարձրացրին սևաթոյր ջրանցքներից... Արդէն երևակայութիւնս սառուռւ էր ազդում, երբ նաւակը կանգ առաւ հիւրանոցի դիմացը և դերմանացի Ծառայի ձայնը սթափեցրեց ինձ։

Վենետկի նկարագիրը շատերն են արել, սակայն ոչ մի նկարագիր ինձ այնքան ճիշդ չէ թուացել ինձ, որքան մի գաղղիացու մատիտով գրած մի տողը դոժոխի պալատի վրան. «Վենետիկը քաղաք չէ, այլ մի թանգարան», այդ թանգարանը դժուար է ստեղծագործել, որովհետև Վենետկի դիրքն ունեցող այլ անկիւն չկայ աշխարհիս վրայ։

Հային երկու բան ամենից շատ է Վենետկում ձգում, մէկն է քաղաքի Հայկական հին փողոցն (Calle degli Armeni) իւր եկեղեցւով և երկրորդը՝ սուրբ Ղազարի կղզին իւր վանքով, ուր ապրում է ամեն հային սիրելի Ն ա հ ա պ ե տ ը, Ալիշանը։

Ո՞վ չէ երգել այդ առաջին հայ բանաստեղծի վառ հայրենասիրական երգերն, ո՞վ չէ գնալել Աարայրի բլբուլի քաղցրահնչիւն ձայնով. ո՞վ չէ ճանչում վերջապէս հայրենեաց աւերակներին սիրահար Նահապետին։ Այո, շատերն են ճանչում նորան, բայց քիչ մարդիկ են գնալել նորան տեսնելու բաղդը, սակայն չէ եղել մի

հայ, որ Վենետիկ հասնելով չը բաղձար տեսնել նորան։

Իմ ևս առաջին բաղձանքս էր վայրկեան առաջ Մխիթարեանց մենարանը դիմել և տեսնել այդ նշանաւոր կղզու միանձն գիտնական բանաստեղծին։

Մարտի 7-ին 1887 թ. առաւօտեան գոնդոլով դիմեցի սուրբ Ղազար, հեռուից ցիրուցան կղզիների մէջ երևում էր հայկական եկեղեցու գմբէթը և շինութիւնների երկար շարքով շրջապատած սուրբ Ղազար կղզին։ Ինչքան մտքեր խառնուում էին չիշողութեանս մէջ, ինչքան վեհ և պատկառելի անձինք կենդանանում էին երևակայութեան մեջ, Մխիթար Սեբաստացին, Միքայէլ Չամչեանը, Արսէն Բագրատունին և այլք։

Վերջապէս հասայ կղզու նաւամատուցին և իջայ նաւակից վանքի դրանը։ Իտալացի բարապանն առաջնորդեց ինձ դէպի ընդունարանը ուր դիմաւորեց ինձ հայր Ե. Սարգիսեանը, որին յայտնուած էր իմ գալուստս։ Բարեկամական ողջոյներից յետոյ յարգելի հայրը առաջնորդեց ինձ աբբահօր սենեակը։

Գերապայծառ Կիւրեղեանը, մի բարձրահասակ գեղեցկադէմ և գրաւիչ դէմքով անձն, ընդունեց ինձ սիրով և ամենայն աջակցութիւն և օգնութիւն խոստանալով, հրամայեց առաջնորդել ինձ հայր Ալիշանի խուցը, որ գտնվում էր աբբայի սենեկի աջ կողմում ընթերցարանին կից։

Ննջասենեակ խցի դուռը բացուեցաւ։ Քառակուսի, լուսաւոր և անզարդ սենեակի մի կողմում դրուած էր անկողին, իսկ ձախակողմեան պատի առաջ գրքերով և թղթերով ծածկուած սեղանի յետևը նստած էր մի ալեզարդ, բարձրայօն վարդապետ, որ վերկենալով ողջունեց ինձ սիրով և հրաւիրեց նստելու։ Այդ բարձրահասակ ալեզարդ քաղցրադէմ ծերունին էր Հայր Ղևոնդ Ալիշանը։

Ն. Փ.

## ՋՈՒՐ ՅՈՅՍԵՐ

—

### Վ Է Պ

(Զարուհակութիւն)

VI

Մելիք-Հարսեղեանի խօսքերը սնոտի պարծենկոտութիւն չէին։

Արդարև նա շատ վաղ էր կարդացել «կեանքի խրատական էջերը», ինչպէս ինքն ասաց։

Նա չքաւոր ծնողների որդի էր. ուսանող ժամանակ հօրից ստանում էր մի աննշան թոշակ, այնքան անշան, որ աւելի լաւ ապրել չէր կարող, քան ինչպէս ինքը համառօտ պատկերացրեց Մարիամի և Ռուբէնի առաջ։

Հայց նրա համբերող, տոկուն և աշխատասէր բնաւորութիւնը յաղթեց նեղութական սուղ հանդամանքներին։ Նա փայլուն կերպով աւարտեց ուսման ընթացքը, բժշկութեան դիպլոմը գրպանում վերադարձաւ հայրենիք Ռուբէնից մի տարի առաջ։

Թիֆլիզ հասնելով, նա փոխեց իւր տարազը, դէն ձգեց տասը տեղից կարկատած, օձիքը կեղտոտ սիւրտուկը, մի հարուստ ընկերից ձեռնարտ վերցրեց և հագաւ նորաձև հագուստ։ Նա մի քանի անգամ այցելեց թատրոն, երեկոյթներ, պարահանդէսներ։ Մի երեկոյ նա մի նուագահանդիսում տեսաւ Մարիամին, որի հետ դեռ գիմնազիստ ժամանակ ծանօթ էր Ռուբէնի միջոցով։ Նա մօտեցաւ, վերանորոգեց նախկին ծանօթութիւնը։

Որքան փոխուել էր հինգ տարուայ ընթացքում Մարիամը։ Նիհար, մէջքից քիչ կորացած, թխադէմ պատանուհին այժմ դարձել էր Թիֆլիզի կանանց դասակարգի գեղեցիկ զարդերից մինը։ Քանի Վասիլը գիմնազիստ էր, մի տեսակ վեհերութիւն էր տիրում նրան Մարիամին տեսնելիս։ Պատճառը ոչ այնքան օրիորդի անձնաւորութիւնն էր, որքան այն պայմանները, որոնց մէջ ապրում էր Մարիամը իւր հօրեղբօր տանը։ Սադափեանների յայտնի անունը, շքեղ ապրուստը ճնշում էին չքաւոր երիտասարդին, և նա հարստութիւնից վախենում էր, որպէս մի անսովոր երազից։ Ահա ինչու երկու տարուց աւելի Ռուբէնին այցելելով, նա չը համարձակվեց, բացի վերջինի սենեակից, մի ուրիշ անկիւն ճանաչել այդ տան մէջ և, բացի Մարիամից, մի ուրիշի հետ ծանօթանալ այդ ընտանիքում։

Այլ էր այժմ, երբ նա ուսումն աւարտած բժիշկ էր։ Երբէք նա Մարիամի մէջ այն զգացումը չէր զարթեցրել, երբ առաջին անգամ օրիորդը տեսաւ նրան Ռուսաստանից գալուց յետոյ։ Այլ ևս դա այն տատամսոտ, վեհերոտ և ամեն մի խօսք ասելիս, կարծես, նոյն իսկ Ռուբէնի սենեակի կահ-կարասիից ամաչող պատանին չէր։ Նրա առաջ կանգնած էր մի հասուն տղամարդ, դէմքը հանդարտ, անվրդով, հայեացքը համարձակ, լայն բացված ճակատով, ուր հնգամեայ յամառ պարապմունքը դրոշմել էին մի որոշ հետք։

Մարիամը շփոթվեց հէնց միայն այդ կերպարանքը տեսնելով։ Իսկ խօսուածքը, խրոխտ ձայնը, աչքերի սուր և թափանցող նշոյլը, որ փայլում էր ակնոցի ապակիների միջով, այս բոլորը ազդու էին այն օրիորդի համար, որ ճանաչում էր նախկին Մելիք-Հարսեղեանին։ Վասիլը մի ամսաչափ մնաց Թիֆլիզում։ Յաճախ նա հանդիպում էր Մարիամին, և հանդիպում էր միմիայն հասարակական տեղերում, որովհետև օրիորդը, հակառակ իւր ցանկութեան, մի անգամ էլ չը հրաւիրեց Նրան Սադափեանների տուն, ուր ինքն իրան ևս հիւր էր համարում։

Ձմեռուայ կիսին Մելիք-Հարսեղեանը գնաց իւր ծննդավայրը և գարնանը մի քանի օրով դարձեալ Թիֆլիզ եկաւ։ Այդ ժամանակ Ռուբէնն արդէն վերադարձել էր Ռուսաստանից։ Բժիշկը խնդրեց նրան ծանօթացնել Սադափեանների ընտանիքի հետ. ծանօթացաւ և սկսեց համարձակ այցելել այն տունը, որի շքեղութիւնից առաջ վախենում էր։ Մայիսի վերջին Ռուբէնը և Մարիամը իրանց մօրաքրոջից հրաւէր ստացան ամառը միասին անցկացնել Դիլիջանում։ Մելիք-Հարսեղեանը, որ բժշկութիւն էր անում Երևանում, ամառուայ կիսին մի օր յանկարծ երևեցաւ չիշեալ ամարանոցում, որ և շատ ուրախացրեց թէ Մարիամին և թէ Ռուբէնին։

Այդտեղ օրիորդը աւելի ազատ էր, նա հեռու էր Սադափեանների հսկող աչքերից, նա կարող էր իւր եղբօր ընկերոջ հետ ստէպ տեսնուել։ Եւ ամեն օր երեք հոգի գնում էին զբօսնելու շրջակայ ծաղկաւէտ անտառներում։ Այս զբօսանքների ժամանակ Վասիլը և Ռուբէնը չաճալ լուրջ վիճաբանութիւններ էին ունենում գիտութեան, արուեստների, բնութեան և երբեմն իրանց ժողովրդի դրութեան, մի խօսքով այն խնդիրների մասին, որ սովորաբար հետաքրքրում են նորաւարտ երիտասարդներին։ Այս վիճաբանութիւնների ժամանակ Ռուբէնը գրեթէ միշտ ոգևորվում էր, տաքանում, այն ինչ Մելիք-Հարսեղեանը Մարիամին հիացնում էր իւր սառն, անշեղ տրամաբանութեամբ։ Եւ թւում էր օրիորդին, որ երիտասարդ բժիշկը ամեն բան գիտէ, ամեն բան ուսումնասիրել է, ուստի այդ բանաւոր պայքարների մէջ նա, իրաւամբ թէ ոչ, յաղթականը Վասիլի կողմն էր զգում։

Երբեմն Մարիամը միջամտում էր նրանց վիճաբանութեանը և անդիտակցաբար պաշտպանում բժշկի հայեացքները։

Ռուբէնը նկատեց այդ և զգաց, որ քոյրը անտարբեր չէ դէպի Մելիք-Հարսեղեանը։ Սակայն նրա անփորձ աչքերը տակաւին չէին թափանցում օրիորդի սրտի խորքը, ուր հետզհետէ արմատ էր ձգում առաջին և վտանգաւոր սիրոյ ծաղիկը, մի բան, որ Վասիլը արդէն զգում էր։ Ամեն անգամ, երբ երիտասարդ բժիշկը նայում էր Մարիամի այլայլուղ երեսին, նրա խոշոր աչքերը խորութեան մէջ կարդում էր իւր թովիչ ազդեցութիւնը կուսական անարատ հոգու վրայ։ Եւ զօրաւոր ուրախութեան նման մի բան թնդեցնում էր նրա սիրտը։ Դա փոխադարձ սիրոյ կամ համակրութեան ձայնը չէր, դա չքաւորի հպարտութեան զգացումն էր, չքաւորի, որ երկարամեայ նիւթական դաժան կեանքից յետոյ առաջին անգամ տեսնում էր հարստութեան քաղցր ժպիտը։

«Քառասուն հազար, — կրկնում էր երիտասարդը իւրովի,—այդ գումարով ինչեր չի կարող անել ինձ նման մի խելօք մարդ»։

Եւ նա սկսեց խրախուսել իւր անուշ յոյսերին։ Նախ նա Մարիամին ցոյց տուեց կեղծ անտարբերութիւն, իբրև թէ չէր նկատում օրիորդի սէրը։ Գիտէր, որ այդպիսով աւելի պիտի վառի օրիորդի սիրտը, ինչպէս շատ անգամ սառն ջուրը աւելի սաստկացնում է կիզանուտ հեղուկի բորբոքված բոցը։ Իսկ երբ բաւական վառեց այդ հուրը, փոխեց իւր յարաբերութիւնը —սկսեց շատ հեռաւոր նշաններով ցոյց տալ փոխադարձ սէր։ Այն ժամանակ նա դիմեց խորհրդաւոր հառաչանքների, մելամաղձոտ ժպիտների, տրտում հայեացքների օգնութեան։

Մի անգամ նրանք, մի ծառի տակ նստած, խօսում էին։ Ռուբէնը բացակայ էր։ Հասարակ բաներից խօսակցութիւնը փոխվեց մի այնպիսի նիւթի վրայ, որ որքան հրապուրիչ էր Մարիամի համար, նոյնքան և երկիւղալի, որովհետև չը գիտէր, թէ ինչով կը վերջանայ։ Խօսում էին մի սիրային վէպի բովանդակութեան մասին, որ Մարիամը նոր էր կարդացել։ Օգտուելով րոպէի տրամադրութիւնից, Վասիլը խօսքը հետզհետէ մասնաւորեց, և այսպիսով նա կարողացաւ արտասանել հետևեալ դարձուածը.

—Ես կեանքումս երբէք չեմ սիրահարվել... Բայց մի օր... պիտի ծծեմ այդ դառն բաժակը։

—Ինչո՞ւ դառն,—հարցրեց օրիորդը, և նրա ձայնի մէջ բժիշկը զգաց սրտի ուժգին զարկը։

—Որովհետև ով գիտէ ճշմարիտ սիրել, նա տանջվում էլ է,—և մի քիչ խորհելուց յետոյ, աւելացրեց.—ես այդ նախազուշակում եմ...

Նա չը շարունակեց։ Մարիամը երեսը շուռ տուեց։ Օրիորդի շրթունքը դողում էին, կուրծքը բաբախում էր։ Թաւուտ ծառի հովասուն ստուերի ներքոյ նկատելի էր նրա այտերի յանկարծակի գունատութիւնը։ Նա չխմացաւ ինչպէս, բայց երբ կամեցաւ վեր կենալ այն մամուռապատ մեծ քարի վրայից, ուր նստած էին, իւր ձեռը զգաց Վասիլի տաք ձեռների մէջ։ Նա նայեց երիտասարդին, որ, կարծես, նոյնչափ յուզված էր, ձեռը մեղմիկ դուրս սահեց և առանց մի բառ արտասանելու շուտով անհետացաւ կանանչ թփերի ետևում։

«Նա փախաւ, նա չետ կը գայ...», ասաց Վասիլը, երկար ժամանակ նստած մնալով մի և նոյն տեղում։

Այդ օրից չետոյ Մարիամի դէմքի վրայ նըշմարելի էր երջանկութեան մի մելամաղձոտ ժըպիտ, որ առանձին մի հրապոյր էր տալիս նրա կերպարանքին։ Յաճախ նա սիրում էր առանձնանալ և անձնատուր լինել իւր մենաւոր մտածումներին։ Նա գիտէր, որ դժուար է թագցնել Թուբէնից իւր և բժշկի մէջ տեղի ունեցած այն նշանաւոր եղելութիւնը։ Եւ քանի քանի անգամ նա կամեցաւ յայտնել, բայց համեստութեան և ամօթի զգացումը կաշկանդում էր նրա լեզուն։

Նոյն օրից չետոյ Մելիք-Բարսեղեանը ամեն մի յարմար րոպէով օգտուելով, աշխատում էր իւր սէրը աւելի ու աւելի պարզել օրիորդին, ոչ միայն լուիկ նշաններով, այլ երբեմն և խօսքով։ Իսկ երբ առանձնանում էր, յաճախ կըրկնում էր հետևեալ մենախօսութիւնը.

«Օ՜օ չքաւորութի՜ւն, չքաւորութի՜ւն, շատ դառն էին քո փորձերը, ես չխմար կը լինէի, եթէ չը խրատվէի այդ փորձերից։ Դու իմ խելացի վարպետն ես եղել, բայց միշտ ատել եմ քեզ, այո միշտ։ Վերջապէս, մօտենում է այն օրը, երբ քեզանից պիտի վրէժս առնեմ»։

Հասկանալի է ուրեմն, թէ ինչու բժիշկը այնքան հեռաքրքրուեց, լսելով Թուբէնի անորոշ խօսքերը իւր և քրոջ դրութեան մասին։ Երկար ժամանակ նա չէր կարողանում հանդարտվել, վերադառնալով այն հիւրանոցն, ուր իջևանել էր։

«Զառանցում էր, թէ կատակ էր անում, մըտածում էր նա, ձեռները գրպանում դրած, անցուդարձելով հիւրանոցի փոքրիկ սենեակում։ Բնակարանը փոխում է. եթէ ճշմարիտ է, յուսով եմ, որ այդ բնակարանը Սադափեանների տան շքեղութեանը պատուաբեր կը լինի։ Նա լիշեց չքաւորութեան ատելի, զզրելի անունը... Անփորձ երեխայ, կարծում է, որ կարող է ինձ նման դիմանալ... Երբէք, երբէք, և ոչ ես այժ ունիմ այսուհետև դիմանալ չքաւորութեանը...»

Մ՚իւս օրը, առաւօտեան վաղ զարթնելով, նա սկսեց խորհել իւր անելիքի մասին։ Նա եկել է Թիֆլիզում մշտապէս հաստատվելու, ուրեմն պէտք է շտապել գործերը վաղօրօք կարգադրել։ Նախ և առաջ հարկաւոր է բնակարան վարձել, իսմ հիւրանոցում չի կարող երկար բնակվել։ Պէտք է բնակարանը օրինաւոր կահաւորել, որ հիւանդը կամ հիւանդի համար հրաւիրողը տեսնելիս՝ մի քիչ պատկառի։ Յետոյ պէտք է տեղական բոլոր լրագրներում յայտարարութիւն տալ, թէ «բժիշկ, ոչ ոչ, բժշկապետ Մելիք-Բարսեղեանը հիւանդներին ընդունում է այս ինչ տեղ, այս ինչ ժամերին...» Ուրեմն բնակարանը պիտի լինի քաղաքի ամենայայտնի փողոցներից մինում, որ լրագիրների էջերում ևս նշանակութիւն ունենայ։ Այնուհետև պէտք է ծանօթներ ձեռք բերել, հանդէսներ այցելել, լաւ լաւ ընտանիքներին մօտենալ և այլն և այլն...

Այս բոլորի համար փող է հարկաւոր։

Նա շօշափեց իւր փողամանը։ Այնտեղ դարսած էին մի քանի հարիւրանոցներ, որ խնայել էր իւր ուղեմատեայ սուղ «պրակտիկայից» Երևանում։ Այս գումարը բաւական է առաջին ծախսերի համար։ Իսկ յետոյ... պէտք է աշխատել ու աշխատել։

Նա մտաբերեց Թուբէնի նախընթաց երեկոյ ասածը տեղական բժիշկների մրցման մասին, և այս անգամ ընկերոջ նախազգուշութիւնը մի քիչ մտածութիւն պատճառեց նրան։ Բայց ոչինչ... չը պիտի մազու չափ յուսահատվել, գլխաւորն այս է՝ չը յուսահատվել, մանաւանդ Մարիամի մօտ։ Առնասրտութիւնը մարդու գօրեղ աջակիցներից մէկն է, վհատութիւնը թուլասիրտների յատկանիշն է։

Այսպէս մտածելով, բժիշկ Մելիք-Բարսեղեանը տասն ու մէկ ժամը լրացած գուրս եկաւ հիւրանոցից, ընտրեց փողոցում մի նորադոյն կառք, վարձեց և գնաց այցելելու իւր հին ու նոր ծանօթներին և ընկերներին, որոնց ցուցակը վաղօրօք կազմել էր։ Երեք ժամ անցած նա վերադարձաւ և սկսեց ամփոփել իւր գանազան հակասական տպաւորութիւնները։ Մէկին տանը չէր տեսել, այցետոմս էր թողել, միւսին հանդիպել էր փողոցում (հակառակ իւր ցանկութեան), մի քանիսը շատ մեծ սիրով էին ընդունել և այլն։ Նա ամենին յայտնեց, թէ եկել է Թիֆլիզում հաստատվելու, թէև Երևանում գործերը չափից դուրս յաջող էին։ Փորձի համար նա մէկին ասաց, թէ Պետերբուրգից հրաւէր է ստացել համալսարանում մանկաբարձութեան դասեր կարդալու։ Այդ մէկը հաւատաց, և բժիշկը նոյնը կրկնեց ամենի մօտ։

Նա իւր այցերի միջոցին կարողացաւ և՛ մի բնակարան վարձել. . .

ՉԻՐՎԱՆԶԱԴԷ

(Կը շարունակուի)

---

## ՖԼՕՐԷՆՏԻԱՆ ԳԻՇԵՐՆԵՐ

### (ՀԱՅՆՐԻԽ ՀԱՅՆԷԻ)

ԱՌԱՋԻՆ ԳԻՂԵՐ։

—

Կանայք շատ էին դրուատում Նորան, բայց ես կասկածում եմ, թէ որ և է մէկը ուժգին սիրահարուէր Նորա վրայ նոյն իսկ ինձ համար Նորա հետ տեսնուելը անտանելի էր, որովհետև թէև Բէլինին արդէն երկար տարիներ Փրանսիայումն էր ապրել, բայց այնպէս վատ էր խօսում Ֆրանսերէն, որ հազիւ թէ Անգլիայում այդ աստիճան վատ կարողանան խօսել։ Նորա խօսելը չպէտք է «վատ» ածականով արտայայտել, որովհետև «վատ» խօսքը այդ դէպքում շատ լաւ է. պէտք է ասել սոսկալի, տգեղասլիուճ։ Այո, Նորա ներկայութեամբ, երբ նա խեղճ փրանսերէն խօսքերը դահճի նման կտրտում էր և անվրդով կերպիւ իւր հսկայական coq-à-l'âne արտասանում, կարելի էր կարծել երբեմն, թէ երկիրը պէտք է մի որոտումով կործանուի... Այն ժամանակ ամբողջ դահլիճում մի մեռելային լռութիւն էր տիրում, բոլորի դէմքերի վրայ նկարուում էր մահուան երկիւղը կաւիճի գոյնով կամ կարմրադեղով. կանայք չը գիտէին թէ արդեօք ուշագնաց լինին, թէ փախչեն. տղամարդիկը շփոթուած նայում էին իրանց անդրավարտիկներին, համոզուելու համար, թէ արդեօք իսկապէս հագած ունեն թէ ոչ. և ամենասարսափելին այն էր, որ այդ երկիւղը միևնոյն ժամանակ մի ջղային ծիծաղ էր յարուցանում, որ հազիւ կարելի էր ծածկել։ Այդ պատճառով Բէլինիի հետ մի որ և է ընկերութեան մէջ եղած ժամանակ, նորան շատ մօտ լինելն երկիւղ էր ազդում. այդ երկիւղը մի աղէտալի հրապոյրով միևնոյն ժամանակ թէ գրաւիչ էր և թէ վանիչ։ Երբեմն Նորա ակամայ բառախաղերը—Calembours—միայն զուարճացնող յատկութիւն ունէին և չիշեցնում էին Նորա հայրենակցի, Պալլագօնիայի պրինցի, դղեակն, որ Գէօթէն իւր իտալական ուղևորութեան մէջ նկարագրում է իբրև մի թանգարան անհեթեթ տձևութեանց և անյանդ այլանդակութեանց։

Եւ որովհետև Բէլինին այդպիսի հանգամանքներում միշտ կարծում էր, թէ մի բոլորովին անմեղ և լուրջ բան է ասել, Նորա դէմքի արտայայտութիւնն և արտասանած խօսքերը մի ամենաանմիտ հակասատկեր էին ներկայացնում։ Այն, ինչ որ Նորա դէմքի վրայ ինձ դուր չէր գալիս, այդ ժամանակ աւելի նշմարելի էր լինում։ Սակայն այն, ինչ որ ինձ դուր չէր գալիս, չէր կարելի մի պակասութիւն անուանել և կանանց համար ևս անհաճոյ չէր լինի։ Բէլինիի դէմքը, ինչպէս նաև Նորա ամբողջ տեսքը, այն փիզիքական թարմութիւնն, այն վարդիգոյնն ունէր, որ ինձ վրայ մի անհաճոյ տպաւորութիւն է թողնում, որովհետև ես սիրում եմ մեռելային և մարմարեայ գոյնը։ Նորան ճանաչելուց երկար ժամանակից յետոյ միայն ես փոքր ի շատէ հակումն զգացի դէպի նա։ Այդ հակումը առաջացաւ նա՛ մանաւանդ այն ժամանակ, երբ ես նկատեցի, որ նա բացարձակապէս ազնիւ և բարի բնաւորութիւն ունի։ Նորա հոգին մաքուր ու անբիծ է մնացել ամեն տեսակ տգեղ յարակցութիւններից։ Նա ունէր նաև այն անմեղ բարեսրտութիւնը, այն մանկականը, որ ունեն միշտ հանճարեղ մարդիկ, թէև այդ ամենքի համար նկատելի չէ։

—Այո, չիշում եմ, շարունակեց Մաքսիմիլեանը նստելով բազկաթոռի վրայ, որին չենուած ուղիղ կանգնած էր ցայժմ, չիշում եմ այն վայրկեանն, երբ Բէլինին ինձ այնպէս սիրալի թուաց, որ ես բերկրութեամբ դիտում էի Նորան և որոշեցի Նորան աւելի լաւ ճանաչել։ Բայց տարաբաղտաբար այդ վերջին վայրկեանն

էր, որ ես տեսայ նորան այս կեանքում։ Այդ տեղի ունեցաւ մի երեկոյ, երբ մենք մի մեծ տիկնոջ տանը, որ Փարիզում ամենափոքրիկ ոտներն ունի, միասին ճաշեցինք, շատ զուարճացանք և դաշնամուրի վրայ ամենաքաղցրիկ մեղեդիները հնչեցրինք...։ Կարծես աչքիս առաջն է բարի Բէլինին, երբ նա վերջապէս ուժասպառ իր շաղակրատութիւնից, նստեց մի թիկնաթոռի վրայ...։ Այդ թիկնաթոռը շատ ցածր էր և այդպիսով Բէլինին նստեց մի գեղեցիկ տիկնոջ ոտների մօտ, որ նորա դիմացը՝ թեքուել էր մի բազմոցի վրայ և մի տեսակ քաղցր չար—ուրախութեամբ վերևից նայում էր Բէլինիին, որ աշխատում էր զբաղեցնել նորան ֆրանսերէն խօսակցելով. նա ստիպուած էր լինում իր ասածները սիցիլիական բարբառով կրկնել, ապացուցանելու համար, որ ասածը չիմարութիւն չէր, այլ ընդհակառակը ամենանուրբ շողոքորթութիւն։ Կարծեմ որ գեղեցիկ տիկինը ամենևին չէր լսում նորա խօսակցութիւնը. նա վերցրել էր նորա ձեռքին եղած սպանիական եղեգնեայ բարակ ձեռնափայտը, որով նա երբեմն ուժեղացնում էր իր թոյլ հնչեղութեան արտայայտութիւնն, և դորանով հանդարտօրէն խառնում էր երիտասարդ վարպետի քնքոյշ ծամերի սանրածքը։ Այդ բարեացակամ պարապմունքին էր վերաբերում այն ժպիտն, որ նորա դէմքին մի այնպիսի արտայայտութիւն տուեց, որ ես երբէք չեմ տեսել մի կենդանի մարդու երեսի վրայ։ Երբէք չեմ կարողանում մոռանալ այդ դէմքը։ Դա այն դէմքերից մէկն էր, որ պատկանում են աւելի բանաստեղծութեան երազական աշխարհին, քան թէ կեանքի բիրտ իրականութեան. դէմքի գծագրութիւններ, որ չիշեցնում են Դա—Վինչինիմ լօմբարդական շկոլայի այն ազնիւ ճուաձև կերպարանքն՝ այտերի վրայ ունեցած փոսիկներով և դիւրագորով սրածայր կզակով։ Գոյնն աւելի հռովմէական մեղմութիւն, աղօտ մարգարտեայ փայլ, վայելուչ գունատութիւն, մօրքիդեցցաւ քնքշութիւն ։ունէր։ Կարճ, դա մի այնպիսի դէմք էր, որ կարելի է միայն մի որ և է հին իտալական պատկերի վրայ գտնել, որ ներկայացնում է այն մեծ տիկնանցից մէկին, որի վրայ սիրահարուել էին տասնուվեցերորդ դարու իտալական արուեստագէտները՝ իրանց գործերի ստեղծագրութեան ժամանակ, որի վրայ մտածում էին այն ժամանակուայ բանաստեղծերն՝ իրանց անմահ երգերն յօրինելիս, և դէպի որը ձգտում էին գերմանական և ֆրանսիական պատերազմի դիւցազուններն, երբ իրանց սրերը մէջքին կապելով և նահատակութիւն որոնելով խոյանում էին Ալպեան լեռների վրայ...։ Այո, այո, մի այդպիսի դէմք էր այն, որի վրայ խաղում էր ամենաքաղցր չարուրախութեան և ամենագեղեցիկ բարեսրտութեան ժպիտն, երբ այն գեղեցիկ տիկինը սպանիական եղեգնի ծայրով խանգարում էր բարի Բէլինիի շիկագոյն ժամերի սանրուածքը։ Այդ վայրկեանին Բէլինին երևեցաւ ինձ կախարդական գաւազանով հպուածի նման. նա միանգամից իմ սրտակիցը դարձաւ։ Նորա դէմքը փայլում էր այն ժպիտի ցոլացման մէջ և գուցէ այդ նորա կեանքի ամենափայլուն վայրկեանն էր...

Երբէք չեմ մոռանայ նորան... Դորանից տասնևչորս օր յետոյ կարդացի լրագրներում, որ Իտալիան կորցրել էր իր ամենանշանաւոր զաւակներից մէկին։

—Տարօրինակ բան, նոյնաժամանակ յայտարարուեցաւ նաև Պագանինիի մահը։ Սորա մահուան մասին մի րոպէ անգամ չը կասկածեցի, որովհետև ծեր, տկար Պագանինին միշտ մեռնողի տեսք ունէր. բայց երիտասարդ Բէլինիի մահն անհաւատալի էր թուում ինձ։ Սակայն առաջինի մահուան լուրը լրագրական սխալմունք էր, Պագանինին առողջ է և ապրում է Գենուայում, իսկ Բէլինին թաղուած է Փարիզում։

—Սիրում էր Պագանինին, հարցրեց Մարիամը։

—Այդ մարդը, պատասխանեց Մաքսիմիլիանը, իր հայրենիքի զարդն է և հարկաւ արժանի է ամենապատուաւոր տեղը բռնելու Իտալիայի հռչակաւոր երաժիշտների շարքում։

—Ես երբէք չեմ տեսել նորան, նկատեց Մարիամը, բայց, ըստ համբաւին, նորա արտաքինը կատարեալ գեղեցկութեան տիպար չ'պէտք է լինի։ Ես տեսել եմ նորա կենդանագիրները...

—Որոնք նման չեն նորան, կտրեց Մաքսիմիլեանը նորա խօսքը, դոքա կամ գեղեցկացնում կամ տգեղացնում են նորան և երբէք չեն արտայայտում նորա իսկականը։ Իմ կարծիքով միմիայն մէկին է յաջողուել Պագանինիի իսկական պատկերը թղթի վրայ դուրս դրել. դա Լիզէր անունով այն խուլ նկարիչն է, որ մի քանի կաւիճեայ գծերով այնպէս լաւ է նկարել Պագանինի գլուխը, որ նկարի իսկութեան վրայ մարդ ծիծաղում է և միևնոյն ժամանակ վախենում։ «Սատանան էր ձեռքս առաջ տանում» ասում էր ինձ խուլ նկարիչը հեգնօրէն և գլուխը շարժելով։ Այդ նկարիչը մի զարմանալի օտարօտի մարդ էր, չնայելով իր խուլ լինելուն, նա ոգևորուած սիրում էր երաժշտութիւնը. նա հասկանում էր երաժշտութեան ձայները կարդալ երաժիշտների դէմքերի վրայ և նոցա մատների շարժուածքից դատում էր նոցա յաջող գործադրութեան աստիճանը. նա գրում էր նաև օպէրայի քննադատութիւններ Համբուրգի մի պատուական թերթում։ Ինչ կայ այդտեղ զարմանալու։ Երաժշտութեան տեսանելի նշաններից կարող էր խուլ նկարիչը տեսնել հնչիւնները։ Չէ որ կան այնպիսի մարդիկ, որոնց համար հնչիւնները միայն անտեսանելի նշաններ են, որոնց մէջ նոքա գոյներ և կերպարանքներ են լսում։

—Դուք մի այդպիսի մարդ էք, աղաղակեց Մարիամը։

—Յաւում եմ, որ այլ ևս չունիմ Լիզէի փոքրիկ նկարը. գուցէ այդ նկարը ձեզ մի գաղափար տար Պագանինիի արտաքինի մասին։

Միայն սև, թուղթիկ գծերով կարելի էր դուրս բերել այն առասպելական գծագրութիւնները, որ աւելի պատկանում են ծծմբախառն խաւարային աշխարհին, քան լուսաւոր կեանքին։ «Ճշմարիտ, սատանան էր առաջ տանում ձեռքս» հաւատացնում էր ինձ խուլ նկարիչը, երբ մենք Համբուրգում կանգնած էինք Ալստէրպաւիլիօնի առաջ. հէնց այն օրն, երբ այնտեղ Պագանինին իր առաջին նուագահանդէսն էր տալիս։ «Այո, բարեկամս», շարունակեց նա, «ճշմարիտ է, որ ամբողջ աշխարհը պնդում է, որ նա իր մարմինն ու հոգին ծախել է սատանային ամենալաւ ջութակահարը դառնալու, միլիոններ վաստակելու և անիծուած թիավարութեան պատժից ազատուելու համար, որտեղ նա երկար տարիներ չարչարուել է։ Տեսէք բարեկամ, երբ նա Լուկկայում երաժշտական խմբի կառավարիչ էր, սիրահարուեցաւ թատրոնական մի իշխանուհու վրայ, նախանձեց մի փոքրիկ աբբայի, գուցէ cocu եղաւ, իտալական եղանակով, որով սպանեց իր անհաւատարիմ Ամատային, դատապարտուեց թիավարութեան Գենուայում, և վերջապէս, ասացի, իրան ծախեց սատանային, որպէս զի ազատուի, ամենալաւ ջութակահարը դառնայ և այս գիշեր իւրաքանչիւրիցս երկու թալէր կորզէ. . Սակայն, տեսնում էք, բոլոր բարի ոգիները փառաբանում են Աստուծուն, տեսնում էք այն ծառուղիով գալիս է նա անձամբ իր երկմիտ ծառայի հետ»։

—Իրաւ որ Պագանինին ինքն էր, որ խօսկն երևեցաւ, նա ծածկած ուներ մի մուգ-մոխրագոյն վերարկու, որ հասնում էր մինչև նորա ոտքերն և այդ պատճառով նա բարձրահասակ էր երևում։ Նորա երկար ու սև մազերը խճճուած հիւսերով թափուած էին ուսերի վրայ, մի մութ շրջանակ էին կազմում նորա գժգոյն և մեռելային դէմքին, որի վրայ տաղնդը, գժոխքը և տագնապը տպաւորել էին իրանց անջնջելի նշանները։ Նորա հետ գալիս էր ցածրահասակ և հաճելի մի անձնաւորութիւն—վարդագոյն կնճռոտ դէմքով. նա հագած ուներ բաց-մոխրագոյն բաճկոն մետաղեայ կոճակներով և անտանելի կերպիւ ուրախ ամեն կողմը ողջունելով՝ միևնոյն ժամանակ անհանգիստ երկիւղով նայում էր Պագանինիի թախծալի կերպարանքին, որ գալիս էր լուրջ և մտախոհ։ Այս տեսարանը նմանվում էր Բէցշի նկարին, ուր Փաուստը Վագների հետ զբօսնում է Լայպցիգի դռների առաջ։

Թարգմ. օր Մ. Մատինեանց։

(Կը շարունակուի)։

## ՋԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Ռուս վէպասանների դործերը մեզանում։ «Նովոե Վրեմիա» լրագիրը առաջ է բերում Տուրգենիեվի և կոմս Տօլստոյի բանաստեղծ Ֆետին ուղղած նամակներից հետևեալ քաղուածները, որոնցից երևում է, թէ չիշեալ երկու վիպասանները ինչ կարծիք ունին միմեանց մասին։

ա) Տուրգենիեվը կոմս Տօլստոյի մասին.

Տօլստոյի «Պօյնա ի միր» («պատերազմ և խաղաղութիւն») վէպը վատ է ոչ թէ այն պատճառով, որ հեղինակը, նոյնպէս վարակուած է «խելքին զօռ տալու»ցաւով—այս ցաւից նա վախենալու տեղիք չունի, այլ վատ է այդ վէպը այն պատճառով, որ հեղինակը ոչինչ չէ ուսումնասիրել, ոչինչ չը գիտէ Կուտուզովի

ու հագրատիօնի անուններով և ներկայացնում է ինչ-որ ստրկապէս արտագրված ժամանակակից փոքրիկ գեներալներ։

բ) Կոմս Տօլստոյը Տուրգենիեվի մասին.

Ես «Դրիմ» («Ծուխ») վէպի մասին այն կարծիքն ունիմ, որ բանաստեղծութեան ոյժը գտնվում է նոյնպէս և սիրոյ մէջ. այս ոյժի ուղղութիւնը կախումն ունէ բնաւորութիւնից։ Առանց սիրոյ ուժի չը կայ բանաստեղծութիւն. սխալ ուղղութիւն ստացած ոյժը—բանաստեղծի թոյլ, անախորժ բնաւորութիւնն է, որ զզուեցնում է մարդուն։ «Ծուխ» վէպի մէջ չը կայ բանաստեղծութիւն։ Կայ նորա մէջ սէր դէպի թեթև և աշխոյժ ողջախոհութիւն, ուստի այդ վէպի բանաստեղծութիւնը հակակրելի է։ Ես վախենում եմ այս կարծիքն արտայայտել, որովհետև ես չեմ կարող լրջամիտ նայել մի հեղինակի վրայ, որի անձնաւորութիւնն ես չեմ սիրում, բայց կարծում եմ, որ ուրիշների տպաւորութիւնն ևս նոյնն է, ինչ-որ իմը։

---

Վերջին ժամին ստացանք մայրաքաղաքի լրագիրները, ուր տպուած է հիւսիսային գործակալութեան հեռագիրը ս. Էջմիածնից ուղղած ապրիլի 24-ին.

«Երեկ ժամանեց այստեղ իտալական թագաժառանգը։ Վանքի հրապարակի վրայ նորան դիմաւորեց բարձր հոգևորականութիւնը զգեստաւորուած և երգեցիկ խմբով։ Իշխանը ուղղուեց դէպի Հայաստանի Լուսաւորիչ Ս. Գրիգորի տաճարը։ Այստեղ իշխանին ողջունեց Մակար Կաթողիկոսը։ Իշխանը պատասխանեց նորան կարճ առենաբանութեամբ։ Հայկերոյթից առաջ իշխանը եպիսկոպոսների ուղեկցութեամբ տաճարը աչքի անցնելուց յետոյ այցելեց Թանգարանը, ուր Համբուրեց սուրբ մասունքները, ապա մատենադարանը և ճեմարանը։ Կաթողիկոսական պալատում պատրաստուած էր ճոխ սեղան։ Հայկերոյթից յետոյ Նորին Վեհափառութիւնը ընդունելութեանց պահլիճում հանդիսով զարդարեց Թագաժառանգի կուրծքը ականակուռ ոսկէ խաչով, որ պարունակում է իւր մէջ կենաց փայտի մասունքը և շնորհեց օրհնութեան կոնդակ։ Թագաժառանգը ջերմագին շնորհակալութիւն մատուցեց կաթողիկոսին, յայտնելով միանգամայն, որ երբէք մոռանալու չէ Նորին Սրբութեան և Ս. Էջմիածինը. 4 ժամին Թագաժառանգը վերադարձաւ Երևան»։

---

Լոյս տեսաւ «Մուրճ ամսագրի» 4-դ, ապրիլի համարը, որ բովանդակում է իւր մէջ 5 բանաստեղծութիւն և հետևեալ յօդուածներն ու նիւթերը՝

Ա. Նամալեանց—Ջրաղաց (պատկեր), Ս. Մելիք Ձահնազարեանց—Հայ գիւղացու սև օրը, Տ. Փիրումեան—Վանայ Ծովակը, Գ. Պռօշեանց—Բղդէ, Ա. Տէր-Միքելեան—Դերմանական դրոց. դրութիւնը, Ե. Մադաթեան—քննադատութիւն։ Դրախօսութիւն, Ամսուայ քրօնիկ, Քաղաք. տեսութիւն, Բացատրութիւններ։

---

Յայտնում ենք ի գիտութիւն հայ հասարակութեան, որ Հ. Ղևոնդ վ. Ալիշանի յիսնամեայ յօբելեանի առթիւ հեռագիր և նամակ պէտք է ուղղել Բազմավէպի խմբագրութեանը հետևեալ հասցէով. Rédaction de la Revue Bazmavep. Venise, S-t Lazare.

---

## «ՄՏՔԻ ՄՂՈՒԿԸ»
### կամ
## ՄՂՈՒԿԻ ՄՏՔԵՐԸ։

Պ. Խ. Մալումեանցը, որի պաշտօնն է մանր տառերով շարած մեծ մտքեր յայտնել «Մշակի» էջերում, հրատարակել է «Մտքի մշակ» անունով խոշոր տառերով շարած մի գիրք, որ նուիրուած է իւր մեկրօ-պատրոն պ. Գրիգոր Արծրունու գլուխ գործունէութեան քսանևհինգամեակին։ Այս շարադրութիւնը մի եղակի երևոյթ է ոչ միայն մեր, այլ և համաշխարհային գրականութեան մէջ և մենք խոնարհում ենք նորա հեղինակի քաղաքացիական քաջութեան առաջ։ Արդարև մի լրագրի մշտական աշխատակից համարուել, մի խմբագրի alter ego'-ն, նորա աջ ձեռքը լինել և անվեհերութիւն ունենալ առանձին գրուածքով հանդէս գալ և հարուածել այդ խմբագրին, ծաղրել նորա անձնաւորութիւնը, տրատաւորել գործունէութիւնը, այդ բանի համար, համաձայնեցէք, որ համոզմունքների քաջութիւն կոչուած հազուադիւտ առաքինութիւնը մարդուս մէջ պէտք է ծայրահեղութեան աստիճանի հասցրած լինի։

Քանի որ Հայոց պատմութիւնը սկսում է միմիայն փրկչական 1890 թուին նիւթեր մատակարարել պ. Արծրունու կենսագրութեան համար *) ուստի անաչառ պատմաբան պ. Մալումեանը առ ի չը գոյէ այլ աղբիւրների՝ քաղել է իւր տեղեկութիւնները անմիջապէս նոյն լինքն օրուայ հերոսի խոստովանութիւններից և հաղորդութիւններից։

Անվեհերութեան առաջին ապացոյցը կենսագրողը տալիս է գծագրելով իւր խմբագրի հօր գեներալ Երեմեա Արծրունու բնաւորութիւնը։

«Այդ մարդը, ասում է պարոնը, վերին աստիճանի [illegible] մարդ էր։ Վարվել ասած բանը նա չ'գիտէր։ Նրա խօսքին խօսք ասել չ'էր կարելի։ Նրա կապրիզների վերջ չ'կար» (եր. 10—11)։

Որպէս զի մարդս վեր կենայ և այսպիսի բաներ գրէ մի անձի յօբելեանի առիթով նորա հօր մասին, յանդգնութեան աստիճանին հասցրած քաջութիւն պէտք է ունենայ։ Սակայն պէտք է նկատենք այստեղ, որ պ. Մալումեանը մասամբ միայն ընդունում է ժառանգականութեան օրէնքը. նա հաստատում է, որ

«Գրիգոր Արծրունին չը նայած իր արիստոկրատիական ծագման, դեմոկրատի հակումներ ունի (եր. 87)։

Ապա անցնելով իր բուն նիւթին, նա սկսում է իր հեգնութիւնները.

«Պ. Արծրունին, (ոչ հայրը, այլ որդին) ասում է պ. Արծրունու մտերիմ աշխատակիցը, մի հսկայ է որի գործունէութիւնը ամբողջ դարագլուխ է կազմում մեր ժողովրդեան պատմութեան մէջ» (եր. 6)։

«Պ. Արծրունին, շարունակում է պ. Արծրունու աշխատակիցը, մի հսկայ է, որ տիրապետեց հայ ժողովրդի սիրտն ու միտքը»։ (երես 7)։

Ապա հեղինակն անցնում է այս նորագոյն Պլուտարքոս սիրագործութիւններին, որոնց հետ համեմատելով չերակլէսի 12 քաջագործութիւնները ոչինչ են։

(Շարունակութիւնը հետևեալ համարում)։

*) Նիւթեր Հայոց պատմութեան համար Ղէ.քսանդր Դաւթեան Երիցեանի։ Գիրք Ա. Թիֆլիս, 1890 թ.

---

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչպէս պէտք է ճառայել տպագրական խօսքին։ Համառօտ հայեացք Հայոց լեզուի ուսումնասիրութեան Եւրոպայում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։—Նամակ Ս. Էջմիածնից։ Զեվեդ-փաշայի հրաժարեցնելը։ Բաֆֆիի հոգեհանգիստը։ Նամակ պ. Գ. Արծրունուն։

ՓԵԼԻՏՕՆ.—Ղևոնդ Ալիշան։ Զուր յոյսեր։ Ֆլօրէնտեան դիշերներ։

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Խմբագիր-հրատարակիչ
ԱՒԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

**ՆԻՒԹԵՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

II

**Գ. ԱՐԾՐՈՒՆՈՒ**

եւ նրա 25 տարուայ գործունէութեան առիթով

Աշխատ.

Ա. ԵՐԻՑԵԱՆՑ

in. 8°, եր. 100

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԵԿ.

Ծախվում է Թիֆլիզի գրավաճառանոցների մօտ։

# THÉÂTRE DE TIFLIS

## COMPAGNIE FRANÇAISE

## D'OPÉRETTES ET D'OPÉRAS-COMIQUES

*SOUS LA DIRECTION DE*

**M-R CLAUDIUS** directeur du Théâtre de Constantinople

Secrétaire de la Direction **M-R CHARLET**

### TABLEAU DE LA TROUPE

M-me **SANDRÉ-PACCARD** première chanteuse d'opérette et d'opéra, M-elle **BRIOUSE** première chanteuse. M-elle **Granier** première chanteuse, (genre Desclauzas et Judic), M-elle **Louise Pascal** seconde chanteuse, M-elle **Geslain** seconde chanteuse, M. M-mes **Elise, Jeanne, Leo Saget, Léona, Bazin, J. Pascal, Fervelle, Falbert, Ségura, Marguerite, Berthe, Fontaine, A. Pascal** (Petits rôles et travestis), M. M-rs **GILLE** premier ténor d'opéra. **Grivel** premier ténor d'opérette. **Balanqué** baryton, **Vergnet** basse, **BONELLY** premier comique, (genre Brasseur), **DOUCHET** premier comique, (genre Dupuis), **SANDRÉ** premier comique en tous genres, **Jeanroy** premier comique marqué, **Fervelle** jeune comique, **Ulrick** second comique, **Bonnet, Stindzi, Coste, Clavel, Barnel**, petits rôles.

*ORCHESTRE DE 20 MUSICIENS sous la direction de*

**M-R MAURICE CLAUDIUS**

RÉPERTOIRE

Dona Juanita, Les petits mousquetaires, Les Brigands, Orphée aux enfers, La princesse des Canaries, Babolin, Joséphine vendue par ses sœurs, Serment d'amour, François les-bas-bleus, L'oiseau bleu, La Grande-Duchesse de Gérolstein, Barbe-Bleue, La vie parisienne. Madame Boniface, Madame l'Archiduc, La cigale et la fourmi, Surcouf, Le lycée de jeunes filles, Si j'étais roi!, Mignon, Le voyage en Chine, Faust, La fille du tambour-major, La mascotte, Boccace, Le jour et la nuit, Le grand mogol, Giroflé-Girofla, M-lle Nitouche, M-lle Niniche, La fille de M-me Angot, Les cloches de Corneville, Les mousquetaires au couvent, Gilette de Narbonne, M-me Favart, La périchole. La Belle Hélène, La jolie parfumeuse, Le cœur et la main, La petite mariée, Le petit duc, Le petit Faust, Carmen, Les dragons de Villars.

---

**ՀՌՉԱԿԱՒՈՐ ԻՏԱԼԱՑԻ ՈՊԵՐԳԱԿԱՆ ԴԵՐԱՍԱՆ**

# ԷՐՆԷՍՏՕ ԲՕՍՍԻ

ԻՒՐ ԽՄԲՈՎ, ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄՆԵՐ ԿԸ ՏԱՅ ՄԷՅԻՍԻ 26-ԻՆ ՍԿՍԱԾ

ՐԷՊԵՐՏՈՒԱՐ. Օ֊ՀԷԼ, Լ֊ՈՒՕԼԻ XI, ՓԻՆ, ԸՐՔԱՅ ԼԻԸ, Ո՜ՀՈԳՈՐԾԻ ԸՆԿՈՆԻՆԸ, ԶԷՅԼՕ, ՄԱՆԷԲԱ, ՆԷՐՕՆ, ՀԱՄԼԷԹ, և Կօրիօլան։

*Ներկայացումների համար բացուած են երկու աբօնըմէնտներ, լուրաքանչիւրը 5 ներկայացում պարունակող։ Առաջին աբօնըմէնտը կը բաղկանայ՝ «Օթէլլօ», «Ոճագործի ընտանիքը», «Զէյլօկ», «Մակբէտ» և «Ներօն» պիէսաներից, իսկ երկրորդ աբօնըմէնտը՝ «Լուդովիկ XI», «Կօրիօլան», «Փին», «Ընքայ Լիւր», և «Համլէտ» պիէսաներից։*

*Աբօնըմէնտը ընդունվում է Թատրոնի կասսայում ամեն օր, 10-ից մինչև 2 ժամ։ Աբօնըմէնտից ստացուած բոլոր փողերը կը յանձնուեն Առևտրական բանկը, ուր որ կը պահուեն մինչև պ. Բօսսի խմբի գալը։*

2—3

## ՎՐԱՍՏԱՆԻ ԳԻՆԻՔ

*Իշխան Իվանէ Բագրատիոն—Մոխրանախո֊ Դիւղօմ և Մոխրան կալուածքներից, որոնք Մոսկվայի յուցահանդիսին ստացել են բարձրագոյն մրցանակը որ է կայսերական Արծիւ*

ԿԱՐՄԻՐ ԳԻՆԻՔ ՍՊԻՏԱԿ ԳԻՆԻՔ։

### ՇԱՄՊԱՅՆ

Գլխաւոր պահեստ Թիֆլիզում՝ Գօլովինսկի պրօսպեկտ, տուն իշխան Իվանէ Բագրատիոն—Մուխրանսկու։ Բաժանմունքներ՝ Պետերբուրգում (Մեծ Մօրսկայա, տուն Տերմինի), Մոսկվայում և Վարշավայում։

# ՀԱՆԴԷՍ

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

(ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ)

*Լոյս կը տեսնէ առաջիկայ մայիս ամսին*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I. Ագամայ մուրթը, աւանգուրթիւն. Պ. Պռօշեանց։—II. Բանաստեղծուրթիւններ, Մ. Նալբանդեան։—III. Դոն Քիշոտի իմաստը, Մտօրօժէնկոյից։—IV. Տղմուտ, Զինուորի մահը. Տեսնում եմ ահա... բանաստ. Յ. Յովհաննիսեանի։—V. Առաւօտեան ժամին, Սերբիական զրոյց Լ. Կ. Լազարեվիչից։—VI. Գողթան երգիչներ, բանաստ. Լ. Մանուէլեան։—VII. Փիլիսոփայական մանկավարժական ընդհանուր հիմունքներն ըստ Լինդների. Յ. Քարխուդարեան։—VIII. Երկու վարդ (Մ.աքս Վալդաուից), Մարգարիտներ (Բօբերտ Պրուտցից), Երգեր (Հայնէից), Փոթորկից յետոյ (Բ. Պրուտցից). բանաստ. Ղ. Ծատուրեան։—IX. Ինչու՞ աշխարհս բարեկարգուած չէ. Կօտ-Մուռլիկայից Մ. Տէր-Զաքարեան։—X. Մաշան, պատկեր. Սուլթան։—XI. Թռու չես գրաւիլ... (Մարտովից), Ստամ Պօէտին. Սոկոլովից. Նոր լուրեր Տաճկահայաստանից. Էշը. Եթէ դու մի օր... բան. Ֆ. Բալուզեան։—XII. Հանս Զիլդբերգերի ճանապարհորդութեան և կեանքի մասին. Վ. Սուրէնեան։—XIII. Թաւաճանին, Իմ հայրենիքն... Լ. Մանուէլեան։—XIV. Կարաբաս, զրոյց Մօրիս Մօնտեգիւէից. Շ. Պ.։—XV. Երջիւ, բանաստ. Սէթ։—XVI. Ուրուականներ, Փանտագիա. Ի. Տուրգենեվից։—XVII. Ծեր ժամկոչը, Խարնաստին իղիլիա. Կօրօլէնկոյից։—XVIII. Թափոր Աւագ Ուրբաթ երեկոյեան, բանաստ. Պ. Հ. Սդամեան։—XIX. Վարդանանց պատերազմի պատճառները և հետևանքները, Եր. Զահակից։—XX. Էօսլոգ Ֆոն Ռանքէ և Հայոց պատմութիւնը, Լօրդ։—XXI. Զահիր Խաչատրի երգերից. հաղորդ. Օր. Մ. Մակարեան։—XXII. Մատենախօսութիւն. Սօս և Վարդիվեր, (հատուած) Մ. Նալբանդեան։—XXIII Յայտարարութիւններ։ 1 Հայագիտութիւն, հաղ. Կ. Ղեվանց։

*Բաժանորդագինն է երկու գրքինը միասին 3 ր. իսկ իւրաքանչիւրը առանձին—2 ր.։*

Յանկացողները դիմում են հրատարակչին հետևեալ հասցէով. Москва, Газетный пер. д. Лианозова. Типографія *М. Бархударянцъ.*

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

---

*Մամուլի տակից դուրս եկաւ*

ԵՒ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԲԱՅԱՌԱՊԷՍ „ԿԵՆՏ. ԳՐԱՎԱՃ.“

ԴԱՍԱԳԻՐՔ

# ԿՐՕՆԻ

(II. ՀԱՏՈՐ)

*Ուղեցոյց հայ կրօնուսոյցների համար*

## ՆՈՐ-ՈՒԽՏԻ

*Նիւթի մշակութեան առաջին մասն։*

Հասցէն.—Тифлисъ, Центральная книжная торговля և կամ Малая Орбеляновская ул. № 26.

*Սահակ քահ. Սահակեանցին։*


ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

## ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ Ի ՄԻՋԻ ԱՅԼՈՑ ՀԵՏԵՒԵԱԼ

### ՆՈՐ ԳՐՔԵՐԸ

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Ե. Մ., Փաւստոս Բիւզանդ . . . . . | — | 50 |
| Փափազեանց, «Լալօ» Թիւրքահայերի կեանքից . . . . . | — | 50 |
| Դէ Ամիչիս, «Սիրտ», ֆրանս. թարգմ. Փ. Վարդանեանի . . . . . | 1 | — |
| — — , «Սպէնինններից մինչև Անդերը», ֆր. թարգմ. Փ. Վարդանեանի. | — | 20 |
| Ջիլլէր, «Աւազակներ, դերմ. թարգմ, Փ. Վարդանեանի. . . . . | — | 50 |
| «Արևելեան Վիսպաշխարհ», Ա. դերմ. թարգմ. Փ. Վարդանեանի. . . . | — | 20 |
| Սարդարեանց, «Զուարճալի ժամեր», ժողովածու Հանելուկների, բառախաղերի, խաղերի, ինգիլիների, Բերուսների, ֆօկուսների, կատակների, անեկդոտների և այլն մասն I . . . . . | — | 40 |
| Նոյնը «Բանալի» «Զուարճալի ժամերի» մ. II . . . . . | — | 10 |
| Լէօ, «Կորածներ» (վէպ) . . . . . | — | 50 |
| Նոյնը, «Վահան Մամիկոնեան» (Հայոց պատմութիւնից) . . . . . | — | 25 |
| Ազայեան, «Ուսումն Մայրենի լեզուի», III դրք, 3-րդ տպ. 1890 թ. . | — | 55 |
| Ազանեան, «Կրօնի Պատագիրք» III տար. ուսումն, 3-րդ տպ. 1890 թ. (փոփոխած նոր ծրագրի համեմատ) . . . . . | — | 25 |

ՁԱՆԱՊԱՐՀ ԻԾԱԽՔԸ ԳՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՅ Է

## ԻՂԻ ԳՈՐԾԱՐԱՆ Յ. ԹԱՅԻՐԵԱՆԻ և Կ. ԱԼԻԽԱՆԵԱՆԻ

Գնելով 1880 թուից գոյութիւն ունեցող Մղերրովի իւղի գործարանը, մենք ոչինչ միջոց չ'խնայեցինք կատարելագործելու արդիւնաբերութիւնը և յատկապէս Մարսելից մասնագէտ ապսպրեցինք:

Ներկայումս մենք արդիւնաբերում հինգ չուանը (գէյթունի) իւղ (գերմանի) (դօրու սէլլի) ալիքա ներկելու համար և այլեայլ իւղ:

Գումարով առնողները պէտք դիմեն գործարանը, որ գտնվում է Երևանեան

շտեղ վերայ, սեփական տանը, իսկ մանր քանակութեամբ գնող յանկացողները կարող են դիմել Բորչալուի հասարակաց կալվածատիրական ընկերութեան խանութը (Երևանեան հրապարակ, տուն Ջակելու) և Սալդատսկի բազարի շալակային բութիկը:

## ԹՂԹԻ ՊԱՀԵՍՏ

ԲԱՐՁՐԱԴՈՑՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԴԻՏԻԱՏԿՈՎՍԿՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

Ունի փոստի, գրելու, դրքերի, լրագիրների, ծխախոտի գոյնաւոր, կազմի և ուրիշ տեսակ թղթեր. Ճախվում են գործարանի գնով. կան նոյնպէս և մեծ քանակութեամբ գրելու պարագաներ:

ԹԻՓԼԻՍ. Գվօրգովայա փողոց. Թիֆլիսի Ազնուականների կալուածական բանկի տուն: (6—20)

# ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԵՐ

*Պատիւ ունիմ յայտնելու այն յարգելի անձանց, որոնք այս ամառ մտադիր են գնալ ամառանոց և ցանկանում են իրանց հետ վերցնելու ընտիր կաթնատու կովեր, որ ես վարձու եմ տալիս այդպիսի կովեր, որոնք տալիս են օրէնը 10—20 կրուժկայ կաթ.*

Դիմել այս հասցէով. Лабораторная улица. 11 переулокъ д. Адамова № 70, **Асланъ Довлатянцъ.**

ԾԽՈՒՈՒՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐ

**ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՆԳԻԱՁԵԱՆՅԻ**

Խանութներում ընդունվում են պատուէրներ թիւրեղուն և ծխախոտ պատրաստելու

Պարոն սպառողների պատուէրները կատարվում են ամենայն ճշգրտութեամբ և մատչելի գներով. արժանի են ուշադրութեան

Ֆունտը 3 ր. 20 կ.

արժողութեամբ և աւելի թանգ թիւրեղունիտեսակները։ Վաճառվում են

# ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՆԳԻԱՁԵԱՆՅԻ

Մեծ քանակութեամբ Հավաննայի, Վարշավի եւ Րիգայի սիգարներ։ Նոր բացուած խանութը— գտնվում է Գալավինսկի փողոցում, տ. Կ. Զուբալովի, Թիֆլիզի ժողովարանին կից։

Նախկին խանութը—„Կովկաս“ հիւրանոցի տակ։

Գործարանը հիմնուած է 1851 թ.։ Արժանացած է երկու արծաթէ նայ մեդալների 1861-ին և 1863-ին և մի ոսկեայ մեդալի 1889-ի Կովկասի ցուցահանդիսին


# ՀԱՇՈՒԵԿՑԻՈՒ

## ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻ

## 1-ն Ապրիլի 1890

| ՊԱՀԱՆՋ | Թիֆլիսում | | հաք. բաժն. և հաթուռմի | | Ընդամէնը | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Դրամարկղ (առաջեռն թղթադր.) | 51,750 | 22 | 93,826 | 31 | 145,576 | 53 |
| 2. Ընթացիկ հաշիւ Պետ. բանկ. ը. | 137,921 | 50 | 497,690 | 36 | 635,611 | 86 |
| 3. Զեղջումն (Disconto) մուրհակաց երկու ստորագրութեամբ | 2,496,474 | 61 | 822,296 | 27 | 3,318,770 | 88 |
| 4. Զեղջ. տոկ. թղ. կտրօնների հայլն | 15,175 | 35 | 2,326 | 97 | 17,502 | 32 |
| 5. Փոխադրութիւն դրաւականով՝ | | | | | | |
| ա) Պետութ. ապահ. տոկ. թղ. | 1,187,717 | 83 | 302,090 | — | 1,489,807 | 83 |
| բ) „ ոչ „ „ „ | 218,574 | — | 4,010 | — | 222,584 | — |
| գ) ապրանքների | 5,500 | — | 41,062 | — | 46,562 | — |
| դ) Ոսկւոյ և արծաթի | — | — | 10,666 | 16 | 10,666 | 16 |
| 6. Բանկայի պատկանեալ տոկ. թղ. | 341,303 | 72 | 22,570 | 80 | 363,874 | 52 |
| 7. Ոսկի և արտաս. փոխանակագրեր | 14,973 | 08 | 14,912 | 40 | 29,885 | 48 |
| 8. Թղթակիցներ՝ | | | | | | |
| ա) Նոցա հաշիւը (Loro) | 2,009,830 | 99 | — | — | 2,009,830 | 99 |
| բ) Բանկայի հաշիւը (Nostro) | 2,842.384 | 12 | — | — | 2,842,384 | 12 |
| 9. Բաժինների հաշիւը կենտրոնական վարչութեան հետ | 1,539,099 | 89 | — | — | 1,539,099 | 89 |
| Կենտրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ | — | — | 1,495,576 | 85 | 1,495,576 | 85 |
| 10. Բողոքուած մուրհակներ | 35,073 | 26 | — | — | 35,073 | 26 |
| 11. Պայմանաժ. անցուցած փոխատ | 7,265 | — | 2,600 | — | 9,865 | — |
| 12. Ընթացիկ ծախսեր | 12,144 | 95 | 4.854 | 76 | 16,999 | 71 |
| 13. Կահկարասիք և սկզբն. ծախսեր | 3,068 | 82 | 3,519 | 09 | 6,587 | 91 |
| 14. Յետ ստացուելիք ծախսեր | 10,478 | 17 | 1,194 | 08 | 11,672 | 85 |
| Ր. Ա. | 10,928.726 | 11 | 3,319,196 | 05 | 14,247,922 | 16 |

| ՊԱՐՏՔ | Թիֆլիսում | | հաք. բաժն. և հաթուռմի | | Ընդամէնը | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Հիմնական դրամագլուխ | 1,000,000 | — | — | — | 1,000,000 | — |
| 2. Պահեստի դրամագլուխ | 165,571 | 28 | — | — | 165,571 | 28 |
| 3. Դրամական աւանդներ՝ | | | | | | |
| ա) Պայմանաժամով | 1,906,490 | — | 224,253 | — | 2,130,743 | — |
| բ) ց'Պահանջ | 228,151 | — | 53,288 | — | 281,439 | — |
| գ) Ընթացիկ հաշուով. հասարակ | 885,330 | 64 | 872,245 | 48 | 1,757,576 | 12 |
| դ) „ „ պայմանաւոր | — | — | 385,134 | 16 | 385,134 | 16 |
| 4) Թղթակիցներ՝ | | | | | | |
| ա) Նոցա հաշիւը (Loro) | 2,088,189 | 43 | — | — | 2,088,189 | 43 |
| բ) Բանկայի հաշիւը (Nostro) | 2,847,025 | 53 | — | — | 2,847,025 | 53 |
| 5. Բաժինների հաշիւը կենտրոնական վարչութեան հետ | — | — | 1,619,263 | 16 | 1,619,263 | 16 |
| Կենտրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ | 1,417,714 | 71 | — | — | 1,417,714 | 71 |
| 6. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշխը 1882, 1883, 1884, 1885, 1886, 1887, 1888 թ. | 2,866 | 81 | — | — | 2,866 | 81 |
| 7. Չվճարուած տոկոսներ, աւանդներ, ընթացիկ հաշիւների և այլ գործողութեանց | 59,040 | 73 | 13,344 | 22 | 72,384 | 95 |
| 8. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ | 119,534 | 89 | 44,187 | 83 | 163,722 | 72 |
| 9. Փոխանցիկ գումարներ | 38,023 | 53 | 57,337 | 41 | 95,360 | 94 |
| 10. Արդիւնք 1889 թ. | 170,787 | 56 | 50,142 | 79 | 220,930 | 35 |
| Ր. Ա. | 10,928,726 | 11 | 3,319,196 | 05 | 14,247,922 | 16 |

Дозволено цензурою. Тифлисъ, 4 Мая 1890 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի։ Типографія И. Мартиросіанца, Орб. ул., д. № 1—2.